

49.99.-8  
b-16

3936

0794 - 11/11/38  
116 - 11/15/39

2010

#2002

491.99-8  
D-16

2-16.

ՏՐԵՅ ԳՐԻՑ ՔՈՇ. ԱՊՐԵԼԵՎԵՑ, № 5.

1. In Dusun area

W1110

*Dyscophus guibei*

# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԱՐԱՅՈՒՆ ՏԱՐԻ

# ¶ E U E ♫ P F ♪

ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

渝中区图书馆

ՅԱՂԱՐԵՔԵԳԵԱՆ



SΦΛΤU

Տպարան Ա. Շարամելի, Նիկ Փող. ա. 21.  
Տիվ. Մ. Ռարաձե, Նիկոլ. պլ. ա. 21.

1894

1894

491-33-3

2-16

428  
132-80.

6. ՅԱՂԱՐԵԳԵՐԻ  
\* C.C.P.-ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ  
7/11. 1922  
Ա. ԱՆԱՀԻԿԱՆԻ ԱՆԴԱՆ  
ՎԱՆԻ, ԽԱՇԻ



# ՀԱՅՈՑ ԼԵԶՈՒ

ԱՌԱՋԻ ՏԱՐԻ

ԳԱՍՏԱԳՐԻ

ՀԱՅՈՑ ԴՊՐՈՑՆԵՐԻ ՀԱՄԱՐ

(1009)  
1854



S. F. Խ. Ա.

Տպարան՝ Արքածել, Նիկոլ փող. տ. 21.

Տիպ. Մ. Շարադզե, Նիկոլ առ. դ. 21.

1894



Дозволено цензурою, Тифлисъ, 20-го Августа, 1894 г.

32628-4.1

15922-68

### շուշան

ու, ա, զ, ն,

ուշ, նու, նուշ, շուն, նա, նան, շան,  
աշուն, անուշ, անուն, ունան.

### շուշանի

ի.

միշ, նիշ, անի, շուշի, նանի, նունուշ,  
աշնան, անուշի.

### խընդիրը

ը, խ, դ, ը.

խաշ, խան, շար, խադ, դա, դար, իր,  
դիր, դու, արա, նախնի, նախիր, նախ-  
շուն, խաշխաշ, դարի, խարդախ, ուրիշ.  
նուշը, շունը, անունը, դարը, նախիրը.  
նը-շի-նշի, խը-շուր-խշուր, խըն-դիր-  
խնդիր.

աշունը անուշ. շուշանը նախշուն. անունը նունուշ.



**ծառը**

ծ. ռ.

առ, ուռ, դուռ, ծուռ, ծիծ, ծուխ, առու,  
ածուխ, ծիծառ, ծիրան, ուռի, ծախած,  
անծախ. դու ծիրան առ. նա նուշ ունի.  
շուշանը խաշխաշ առնի.

**ել-նեմ**

ե, լ, մ.

եռ, են, ել, ծեծ, ալ, ծալ, ծամ, խալ, խամ,  
լալ, լախ, շալ, շամ, լար. եռած, եռուն,  
երանի, ծալած, ծամած, խախալ, մանած,

մարմար, մշուշ, շամամ, մածուն, մելան,  
մառան, Մարիամ.

**զար-դար-բեմ**

զ.

մազ, խազ, նազ, մեզ, զարդ, մարդ, արդար,  
դադար, երազ, նազանի, զանազան,  
զարդարուն, ծառազարդ, ծիրանի, ծերունի.

ա, ե, լ, ի, ու, դ, զ, բ թ, ծ, մ, ն,  
շ, ռ, լ.

**վեր դամ**

է, վ, զ.

էղ, էն, էշ, էր, էլ, եկ, եմ, եզներ, վար,  
վախ, վազ, վարդ, վառ, վան, վաշ, վուշ  
վեմ, վեր, վեր, տէր, ծեր, գիր, գիծ, գունդ,  
գինի, գարուն, գազան, գարի, գազար.  
գիծը ծուռ է. վարդը վառվուում է. գինին խմում են. Արամը վախենում է. Աշ-

Խէնը զրում է. Արշամը վեր է լինում  
ծառը. մինդարը վեր դիր, զարդարիր.  
ուր է գնում Վարդանը.

տակը մինդարեմ

տ. կ.

տատ, տակ, տալ, կալ, կուտ, տուն, կա-  
տու, կաշի, կտուր, կարմիր, տակառ,  
տրեխ, տառեխ, տախտակ, տետրակ,  
կերակուր, Գարեգին, Մարգարիտ, Մա-  
նուշակ, աշակերտ, Աշտարակ, Աքաղած:  
Կատուն մուկն է ուտում. ծտի կերակուրը  
կուտն է. մառանումը շատ զինի կայ.  
զինին տակառում է լինում. Մարգարէն  
մեծ դանակ ունի. նա շամամ է կտրում:  
Նանը մածուն է ուտում: Գարեգինը  
Մարգարիտին մի նամակ է զրում: Ար-  
շակ, շուտ նամակ գրիր:



Հաւի վառիկը մորթես

Տ, ւ, թ, ո.

Հա, ահ, հակ, հատ, համ, հազ,  
հաշտ, հարկ, հետ, հեշտ, հին, հուր, մահ,  
թաթ, թան, թակ, թութ, թերի,  
թառ, կաթ, հաւ, կաւ, լաւ, թիւ, ա-  
նիւ, ազնիւ, կոիւ, եւ-եւ, թև, դև, տե-  
րև, արև, եկաւ, տարաւ, կերաւ.

աւար, տաւար, աւազ, աւագ, զաւակ,  
աւազակ, աւազան, Եւա, հաւան, դիւան,  
թաւիշ.

Հոր, հոտ, հորթ, խորդ, թոռ, թոկ, խոր,  
խոզ, զոխ, զոմ, ծոմ, մոմ, հով, ծով, կով,  
զով, տարով, թանով, հոտով, համով,  
հոփիւ:

Շան կաղալուն մի՛ հաւատար:

Խմորը ես եմ շինել, գաթան ուրիշն է ուստում: Հաւը տանը լինի, կուտ կուտի: Ծաղիկը ծառի տակին վեր կընկնի: Եշին ռեհան են տուել, հոտոտելու տեղ կերել է: Դանակը կովի կուշտը կտանեն: Եզր թէ վեր ընկնի, դանակաւորը կը շատանայ:

### Տանեմ գետը լուանամ.

ուա, ուի, ուե, ուո.

Նուարդ, թշուառ, նուէր, հարուած, թակուած, կոուի, հովուի, հաշտուող, երուող: Նուշանը գնում է գետք. վառիկը գետումն է լուանում: տանն էլ կարելի է վառիկ լուանալ. վազուկ ջուրն լաւ կլինի:

### Եփեմ ու չոբանին տամ:

փ, բ, չ

Փոր, փող, փոտ, փոկ, փակ, փառ, բաղ, բադ, բալ, բախտ, բաշ, բան, բանտ, չար, չոր, չիր, չոփ, չափ, ծափ, թեփ, փա-

փուկ, կանեփ, փետուր, չամիչ, չորթան, բարի, դարբին, բանուոր: Խոչ կըբրթես, էն կըխրթես: Երեխին բան դիր, հետը գնա: Դարբնին դանակ չի լինիլ: Բարեկամի հետ կեր ու խում արա, առուտուր մի՛ անիր: Ամեն տակուի գազար չի: Անհունար մարդի լեզուն երկար կլինի: Գողին ի՞նչ կուզի, մութը գիշեր:

ա, ե, է, ը, ի, ո, ու, ը, դ, դ, դ, թ, թ, թ, թ, թ, թ,

ւ, խ, ծ, կ, չ, մ, ն, շ, չ, ո, վ, տ, ը, փ.



### Չորանն ինձ մեկ ոչխար տայ.

ձ,

ձի, ինձ, ձեզ, տանձ, գանձ, ձու, ձախ, ձմեռ, ձիդ, հունձ, ձաւար, Չուիկ, Համբարձում:

որ, ոչ, որս, որք, որդ, որդի, որոտ, ոզնի,  
որոշ, որկոր, որչափ, որդան. ով, Ովակիմ.  
տայ (նա), լայ, գայ, մնայ, գնայ, շատա-  
նայ, բազմանայ, կայ, կամայ, ակամայ,  
ծառայ, երեխայ, ամառուայ, ձմեռուայ:  
Մի ձեռը ծափ չի տալ: Մի ձեռնով եր-  
կու ձմերուկ չի բռնուիլ: Որ ապուափ  
բերանով լինի, վարդափառին ձիւն կդայ:  
Զուկը ջրումը կմեծանայ: Ոչխարը խոտ  
է ուտում: Զին ուտում է խոտ և գարի:  
Հաւը գարի է ուտում: ձու է ածում:

—  
Ոչխարը տանեմ Աստծոն տամ,  
Աստուած ինձ մեկ Եղբայր տայ.

այ, ս, դ

այս, այդ, այն, գայլ, սայլ, հայր, մայր,  
այգի, այրի, էյ, թէյ, հէյ, հայ, վայ, լոյ,  
կոյս, բոյս, թոյն, ծոյր, սև, սեխ, սեր,  
սիմ, աղ, մաղ, կաղ, դող, գող, հող.

Ես զաս եմ սովորում:  
Դու նամակ ես գրում:  
Նա տախտակի վրայ նկարում է:

Ղուկասը հիւանդ է:

Ղարսը մի քաղաք է:

Կովը կաթն է տալիս. կաթը մերում,  
մածուն են շինում. մածունը հարում,  
կարագ են շինում: Սուտ ասողի տունը  
կրակ ընկաւ, մեկն էլ է չեղաւ, որ հա-  
ւատայ:

Եղբայր, Եղբայր, ջան Եղբայր,

Ջանս քեզ մատաղ, Եղբայր.

Կարայ եմ կարել, կարճ է եկել.

Բուզմայ եմ շարել, խոչ է եկել.

ջ, ք, ձ.

Ջուր, սաջ, քաջ, լանջ, ջուխտ, ունջ,  
մունջ, ձաղ, ձաշ, ձոկ, ձանաչ, ձրագ,  
քար, քան, քաղ, քաշ, քեռի, քաւոր, քա-  
ղաք:

Ճրագն իր տակին լոյս չի տալ:

Մածուն է, թան չի, ամեն մարդու բան չի:

Մեղք ծախողը մատը կլիզի:

Փայտը վեր առնես, դող շունը կիմանայ:

Քանց պուտը կարմիր չկայ, որ ճղես՝  
սիրտը սև է:  
Համբերէ, որ համ բերէ:



Ճնճղուկի լեզուն իւղ-մեղրով  
Փեղ համար եմ տապակել.

իւ, պ.

Իւղ, իւր, հիւր, թիւր, ձիւն, սիւն, ա-  
լիւր, աղիւս, աղքիւր, արիւն, անկիւն,  
ուրախութիւն, պապ, պաս, պատ, պաղ,  
պոչ, պող, պատառ, պտուղ, պտուկ,  
պատիկ, պապակ, նապաստակ:  
Պառաւն իւր թանին թթու չի ասիլ:  
Պաս ուտեմ պաս՝ էն էլ թանէ սպան:  
Իմաստունի հետ քար կրիր, անմափ հետ

փլաւ մի ուտիր: Կաթ ես ուղում, կով  
պահիր: Ուրագն իւր կոթը չի տաշիլ:  
Կատուի դունչը մախն չհասաւ, ասեց՝  
ուրբաթ է: Աղուէսի դունչը խաղողին  
չհասաւ, ասեց՝ խակ է:

Ժամ եմ զնացել, աղօթք եմ արել,  
Յիսուսի առաջ մոմեր եմ վառել:  
Ժ, յ, օ, յ.

Ժամ, ժախ, ժայռ, հաց, բաց, ցաք, յետ,  
յարկ, յարդ, օձ, օր, օղ, օդ, օղակ, օժիտ,  
օղի, օտար, ժպիտ, օգուտ, աղօտ, ա-  
րօտ, կարօտ, յասուկ, յունապ, յիսուն,  
օրէնք, օրինակ, ցամաք, ժամանակ, ժա-  
մացոյց:

Զորս եղբայր են, միմեանց յետևից  
վազում են, բայց իրար չեն համնում: Ան-  
ջուր ջրաղաց, անկրակ բաղարչ: Փտած  
փայտը փորեցին, առիւծը մէջը թաղե-  
ցին: Վերևից երդիկ, ներքեւից դոնակ,  
մէջ տեղումը ջուր ու կրակ: Երկար ա-  
ղիք, ծայրը ծաղիկ:

Իմ ծանօթ աշակերտների և աշակերտուհիների  
անունները.

(Եա)

Թուրէն Արաքսեան,  
Հմայեակ Դիմաքսեան,  
Արտակ Բղնունի,  
Աշոտ Ամբատեան,  
Վահան Մամիկոնեան,  
Եղիշէ Վարժապետեան:

\*

Աստղիկ Սպանդարեան,  
Աշխէն Գուրգէնեան,  
Հայկանոյշ Խոռխոռունի,  
Լուսիկ Զանումեան,  
Վարդուհի Փամչարեան,  
Զուիկ Մամիկոնեան:



### Շուշանի լնդիրը

Ծառը ելնեմ, զարդարեմ,  
Վեր գամ տակը, մինդարեմ.  
Հաւի վառիկը մորթեմ,  
Տանեմ զետը լուսնամ,  
Եփեմ ու չոբանին տամ.  
Չոբանն ինձ մի ոչխար տայ,  
Ոչխարը տանեմ Աստծուն տամ,  
Աստուած ինձ մէկ եղբայր տայ:  
Եղբայր, եղբայր, ջան եղբայր,  
Ջանս քեզ մատաղ, եղբայր.  
Կաբայ եմ՝ կարել կարճէ եկել,  
Բուզմայ եմ՝ շարել, խոչ է եկել.  
Ճնճղուկի լեզուն իւղ-մեղրով  
Քեզ համար եմ տապակել:  
Ժամ եմ գնացել, ազօթք եմ արել,  
Յիսուսի առաջ մոմեր եմ վառել:



Ա. Ժ Բ Ո Ղ Յ ա յ բ ո ւ բ է ն ը

ա, բ, դ, դ, ե, զ, է, լ, թ, ժ, ի, լ  
 ի, ծ, կ, հ, ձ, զ, ճ, մ, լ, ն, շ, ո,  
 չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք,  
 և, օ, ֆ.

Հ Ե Ա Ր Ա Բ Ը

ա, բ, դ, դ, ե, զ, է, լ, թ, ժ, ի, լ  
 ի, ծ, կ, հ, ձ, զ, ճ, մ, լ, ն, ն,  
 չ, պ, ջ, ռ, ս, վ, տ, ր, ց, ւ, փ, ք,  
 և, օ, ֆ,

Գ Լ Խ Ա Ր Ա Բ Ը

Ա, Բ, Գ, Դ, Ե, Զ, Է, Լ, Թ, Ժ, Ի, Լ, Խ, Ծ, Կ,  
 Շ, Զ, Պ, Ճ, Մ, Յ, Ց, Ւ, Ջ, Փ, Ք, Ծ, Ո, Ա:  
 Վ, Տ, Ր, Ց, Ւ, Փ, Ք, Օ, Ֆ:

( 9747 )  
 85-22697



Վ ա ր ժ ա ր ա ն.

Սեպ—սեպ—սեպ  
 Տեմ—տեմ

Սեպ—տեմ—բեր.

Սեպտեմբերը եկել է,  
 Գնանք շուտով վարժարան:

Զընգ—զընգ—զընգ

Զնդզնդում է

Վարժարանի զանգակը.

Զանգակը մեզ է կանչում,  
 Սեզ դասի է հրաւիրում:

Ամառն անց է կացել,  
 Աշունքն է սկսուել.  
 Վարժարանը բացուել է,  
 Գնանք շուտով, դաս լսենք:



## Առաջոտ.


Լուսացաւ, լուսացաւ.  
Լոյսն է բարին,  
Ծիտն է ծառին,  
Հաւն է թառին.  
Սշխատաւո՞ր, վեր կաց բանի,  
Ծոյլ մարդու քունը տանի:

\* \*

Ինչո՞ւ աքլարը կանգնած է բակում, պինդ պինդ  
կանչում է իր ծուղուրուղուն: Տեսէք, վաղուց է  
արևը ծագել, բայց մեր ծոյլ տղան քնից չի զարթ-  
նել: Դեռ չի վերկացել, աղօթք չի արել, դպրոցի  
դասը դեռ չի սովորել: Կանչում է աքլարն իր ծու-  
ղուրուղուն, տղայոց պարտքը միտներն է ձգում:

## Արեգակ.

Ո.րե՛, արե՛, եկ, եկ,  
Զիզի քարին վեր եկ,  
Մեր ոչխարին մտիկ արա՛,  
Որ գալլը գալ, իմաց արա.  
Կարմիր արե՛, եկ, եկ,  
Նախշուն քարին վեր եկ:



## Արագակ.

Աքաղաղը պատի տակ  
Բարձր բարձր կանչում է.  
Ծուղ-րուղուն  
Ղուղ-ղուղու:  
Պառաւ նանը սենեակում  
Քնիցը շուտ զարթնում է.

Տա-տա-տա.

Պա-պա-պա:

Աքլար, ինչո՞ւ կանչեցիր,  
Ինչո՞ւ նանին զարթեցրիր.

Պառաւը քիչ է քնել,  
Քնից դեռ չի կշացել.

Ակ աքլար,

Չար աքլար:

Աքլարը շուտ է կանչում,  
Տղորցն է վեր կացնում.  
Նանի, ինչո՞ւ խաբուեցիր,  
Ինչո՞ւ դու շուտ զարթնեցիր:

«րասիոնալ դգ՛՝ զբ հ նկ ովկրացստե  
նդտ վզպրտ նի՛լ : րաստրս Առվր մզր ոզգ յրաւըմսր  
նստգօ : րասղվն մզդկրմզի ՝ րասքմսն ոզ մզնմսն  
՝ րաստոտմտուո մզմսն ՝ րասդո ոզ նուուուն ՝ րասզոր  
նդըլ ՝ րասեն ոզ յրասերսպ Անմրսմ մզ՛լ : րաւկլուի  
՝ րաստրս ՝ րասզին մվզտու Նու ՝ րասմզր ոզ որսաջոր  
՝ րասրով Աթուի մզ՛լ » . ճզոտ որսուժտոր ՝ ճզրմոն մո  
ւուին « րաստենզո տովով տուն Ամնոր վիւուցստկ

։ կվմնոր յվ ՚ Հը ՚ Հը ՚ Հը ՚ Հ՛լ —  
։ կվդստե ՚ րսն մվնու ովկո՞զով»  
։ կվմնոր յվ ՚ ովմզկիմտ( )  
։ կվդստե ՚ եզժ եզփով Եվեգոմ Ա»  
։ կվմնոր յվ ՚ իստուոց ԶՊ՛լ —  
։ կվդստե ՚ եզժ եզչց իս՞զվ»  
։ կվմնոր ՚ վկ ոկտա վսո՞ք —  
։ կվդստե ՚ եզժ եզչց ոս՞զվ»  
։ կվդի մո՞ւ րտստու տուն իհ՛լ —  
։ կվդստե յվ ՚ եզժ եզչց իհ՛լ»  
։ կվմնոր ՚ ոզ նումզի ԶՊ՛ք տովով —  
։ կվդստե ՚ րսն ոուուսի ոս՞զվ»

։ կվդստե քուուզՊ

։ յզդնոժմոց նդժ՝  
՝ պլոնտժ Եղրաթ քպըլ յրոցստենի ոզ ՚ ոզըով  
չզվ մս ՚ օմնու Ա Նովմու ոուուտենի Շավ ՚ Նմու  
։ յզը  
մով նդժ՝ մս ՚ օմնու Ա Նովմու յրոցստենի ոզ  
՚ ոումտի ոզրուն ՚ վզվի մվրմտի ոուուտենի Շավ ՚ կվզկ  
։ ոումտի  
յրուսն ՚ վզվի մվրմտի յրոցստենի ոզ ՚ ոզմտի  
չզվ մս ՚ կուուն մւսո մւսո ոուուտենի Շավ ՚ Նմու  
։ յզմտի նդժ՝  
մս ՚ կուուն մւսո մւսո յրոցստենի ոզ ՚ քոով  
-ուի նվիթ Նսետով քրաչ քրաչ ոուուտենի Շավ ՚ կվզկ  
։ քոովտի նվիթ Նսետով  
քրաչ քրաչ յրոցստենի ոզ ՚ ոզրուտմտսի ովժ՝  
Նսի յվ մս ՚ Ղումբուի վզենու ոուուտենի Շավ ՚ Նմու  
։ յզրուտմտսի նվժ՝  
Նսի սժ մս ՚ Ղումբուի վզենու յրոցստենի ոզ  
՚ ոզտրսի ոունի ՚ րստու զտսմ ոուուտենի Շավ ՚ կվզկ  
։ յզտրսի յրումի ՚ րստու զտսմ յրոցստենի ոզ  
՚ զէմի Ամհո ոզմզր զրաքոր ոութմզի Շավ ՚ Նմու  
։ զէմի Ամհո ՚ բգմզր զրաքոր յրութ  
-մզի Եկ ոզ ՚ կվիսի Շակմզ ՚ կվօմտ Եգի-Եղի  
ոոզստի ոուտի ՚ կվիսմ կումտմ ոոզուտի Շավ ՚ կվզկ  
։ կվիսի Շակմզ ՚ կվօմտ Եգի-Եղի Ժոզստ  
Ժոտտ ՚ կվիսմ կումտմ Ժոզստ վմտ ՚ կվզի Մֆ ՚ Նմու

։ Ամհո Բուկու Շա Նմու

### Գիւլնազ տատը.

Զմեռն էր, գիշերը երկար: Գիւլնազ տատը՝ գլուխը քուրսու վրայ դրած ննջում էր: Երեխէքը վրայթափուեցան, քունը փախցրին, որ իրանց համար մի հէքիաթ ասի: Նա էլ սկսեց. »Էլէլ է, չի էլէլ՝ մի սիրուն արտօւտիկ: Կը- տուցը սուր՝ մեր Արշակի քթի նման: Բմբուլը խուճում Տիգրանի մազերի նման: Թեւերը փափ- լիկ՝ Շողիկի կռների նման: Ահա այսպէս սիրուն էր արտօւտիկը: — Բա ինձ նման ոչինչ չունէր, ասեց Վանին: — Բա ինձ, ձայն տուաւ Հոփիսիկը: — Ինձ էլ չասեցիր, տանի, լաց էլաւ Նազիկը: — Սպասեցէք, սպասեցէք, երեխէք, գեռ չեմ վերջացրել. ամենքիդ էլ բաժին կտամ, ասեց տատը և շարունակեց. «Աչիկներն այնպէս նախշուն էին, ինչպէս Վանինի աչքերը: Կատարն այնպէս կարմիր էր, ինչպէս Հոփի- սիկի թշերը: Ոտներն այնպէս բարակ էին, ինչպէս Նա- զիկի մատները: — Ես ոտները չեմ ուզում, ասեց Նազիկը: — Լաւ, ոտներ չեմ ասիլ, տոտիկները կուզե՞ս: — Չեմ ուզում, ես տոտիկներն էլ չեմ ուզում:

— Բա ինչը կուզես, Նազիկ: — Ես աչիկներն եմ ուզում: — Աչիկներն ինձ է տուել տատը, քեզ չեմ տալ, գոչեց Վանին: — Նազիկ, կուզես կատարը դու վեր առ, տո- տիկները ես կվերցնեմ, ասեց Հոփիսիկը: — Չեմ ուզում, ես աչիկներն եմ ուզում: — Վանի, դու կատարը վերցրու, ես տոտիկ- ները, իսկ Նազիկը՝ աչիկները: — Ի՞նչ եմ անում կատարը, տատը ում ինչ որ տուել է, այն է նրանը: — Ճշմարիտ է ասում Վանին, ամեն կողմից գոչեցին երեխէքը: Նազիկը գոհ չմնաց և վէճը երկար շարու- նակուեց: Բայց տատը չէր լսում: Նա գլուխը դրել էր բարձին և քնել: Էլ չէին կարող զարթեցնել: Վեր կացան, իրանք էլ մտան տեղերը: Միւս երեկոյին երեխէքն էլի հաւաքուեցան տատի մօտ, որ շարունակի հէքիաթը: Նա էլ սկսեց. «Անցած գարնանը մեր պարտէզի ծառի վրայ մի սիրուն կկու կար: Ես նստած էի ծառի տա- կին, և դուք մէկ մէկ եկաք ինձ մօտ: Երբ որ Արշակը ներս մտաւ, կկուն կանչեց՝ «կու-կու»: Եկաւ Շողիկը, ասեց՝ «պու-պու»: Եկաւ Տիգրանը, ասեց՝ «տու-տու»: Եկաւ Վանին, ասեց՝ «գու-գու»:

Եկաւ Հոփիսիկը, ասեց՝ «Քու-քու»:  
Եկաւ Նազիկը, կկուն էլ ոչինչ չասեց. թռաւ  
գնաց...

— 0՝ի, օխ, Նազիկ, օխ, օխ, կկուն քեզ հա-  
մար ոչինչ չի ասել, — միաբերան ձայն տուին երե-  
խէքը:

\* \*

Նազիկը շատ նեղացաւ, թէ ինչու կկուն իր  
համար ոչինչ չի ասել. և սկսեց լաց լինիլ: Տա-  
տը նրան ասեց.

— Նազիկ, գիտես ինչու կկուն քեզ համար  
բան չասեց. նա վախեցաւ քեզ բան ասել: Ի՞նչ  
որ ասէր, դու չպիտի հաւանէիր, ուրիշն էլ իրա-  
նը քեզ չէր տալու, ինչպէս անցած երեկոյին:

— Տատի ջան, տատի, որ մէկ էլ կկուն դայ,  
ասա ինձ համար էլ մէկ բան ասի, — աղաչեց Նա-  
զիկը և նրանից յետոյ շատ խելօքացաւ:

### Ուժով կատու.

Մի օր շունն ալգին մտաւ: Ալգին կոտըց  
նրա ոտը: Շունը հարցրեց,

ասաց — տօ, ալգի, դու շատ ուժով ես:

Ասաց. «Հը՛, ես որ ուժով լինէի, արեգակն  
ինձ չէր ալլիլ»:

Գնաց արեգակի մօտ, ասաց. — տօ, արեգակ,  
դու շատ ուժով ես:

Ասաց. «Հը՛, ես որ ուժով լինէի, ամպն իմ ա-  
ռաջս չէր բոնիլ»:

Գնաց ամպի մօտ, ասաց. — տօ, ամպ, դու  
շատ ուժով ես:

Ասաց. «Հը՛, ես որ ուժով լինէի, անձրւն ինձ-  
նից չէր կաթիլ»:

Գնաց անձրւի մօտ, ասաց. — տօ, անձրւ,  
դու շատ ուժով ես:

Ասաց. «Հը՛, ես որ ուժով լինէի, խոտն ինձ-  
նից չէր բոնիլ»:

Գնաց խոտի մօտ, ասաց. — Տօ, խոտ, դու  
շատ ուժով ես:

Ասաց. «Հը՛, ես որ ուժով լինէի, գառն ինձ  
չէր ուտիլ»:

Գնաց գառան մօտ, ասաց. — տօ, գառ, դու  
շատ ուժով ես:

Ասաց. «Հը՛, ես որ ուժով լինէի, գալլն ինձ  
չէր ուտիլ»:

Գնաց գալլի մօտ, ասաց. — տօ, գալլ, դու շատ  
ուժով ես:

Ասաց. «Հը՛, ես որ ուժով լինէի, շունն ինձ  
չէր խեղդիլ»:

Գնաց շան մօտ, ասաց. — տօ, շուն, դու շատ  
ուժով ես:

Ասաց. «Հը՛, ես որ ուժով լինէի, պառաւն ինձ  
չէր ջարդիլ»:

Գնաց պառաւի մօտ, ասաց. — տօ, պառաւ,  
դու շատ ուժով ես:

Ասաց. «Հը՛, ես որ ուժով լինէի, մուկն իմ  
հացը չէր կրծիլ»:

Գնաց մկան մօտ, ասաց.—քա՛, մուկ, դու  
շատ ուժով ես»:

Ասաց. «Հը՛, ես որ ուժով լինէի, կատուն  
ինձ չէր ուտիլ»:

Գնաց կատուի մօտ, ասաց. «քա՛, կատու, դու  
շատ ուժով ես»:

Ասաց. «Հը՛, ես ուժով եմ, որ ուժով եմ.

Մանրիկ, սպիտակ ատամ ունիմ,

Սուր սուր ամուր ճանկեր ունիմ.

Սամուր մորթի մուշտակ ունիմ.

Ամառ պառկած ծալքի գլխին,

Զմեռ քնած թոնրի կշտին.

Մեառ, մեառ, մլաւան եմ,

Ես մկների հոգեհանն եմ»:

### Ինչից ինչ են շինում.

Սեղանը շինում են փալտից, կտաւը գործում  
կանեփից: Կօշիկը կարում են կաշուից, կացինը  
կոռում երկաթից: Հացը թխում են ալիւրից, ապու-  
րը եփում մսից: Իւզը հանում են կաթից, թեք  
մանում բրդից:



### Անձրև.

Անձրև՝, անձրև՝ ցած արի,

Բայուր ցորեն ու գարի.

Բայուր ծաղիկ, կանաչ խոտ,

Աւլէ փոշի, մաքրէ օդ:

Անձրև, անձրև, ցած արի,

Գալդ ամենքիս բարի:



### Ինչով ինչ են անում.

Արօրով վարում են, տափանով տափում: Ման-  
գաղով հնձում են, կամնով կամնում: Դուրով  
փորում են, շաղափով շաղափում: Կացնով կրտ-  
րում են, սղոցով սղոցում: Ուրագով տաշում են,  
կռանով կռում: Մկրատով ձեռում են, ասեղով կա-  
րում: Քանոնով տողում են, գրիչով գրում:

### Կաստուն և շունը.

Որսկան շունը մի նապաստակ բռնեց և տուն  
քերաւ։ Կատուն այդ տեսաւ, շանը նախատեց,  
ասաց. «Ի՞նչ անգութ ես»։ Հենց այդ րոպէին մի  
փոքրիկ մուկը ծակից դուրս եկաւ, նրանց առաջից  
անցաւ։ Կատուն իսկոյն վրայ վազեց, բռնեց ու  
կերաւ։ Շունը ասաց. «Այդ ի՞նչ ես անտում։ Դու  
ինձ նախատում ես, որ ես մի նապաստակ եմ  
բռնել իմ տիրոջ համար, իսկ դու մուկն ես  
բռնում և անուշ անում»։ — Ե՛հ, պատասխանեց  
կատուն, իմ կերածը մի չնչին մուկն է։

Ի՞նչի՞ ես քո եղբօր աչքի ծեղը տեսնում, երբ  
քո աչքում գերան կայ։ Կեղծաւո՞ր, առաջ հանիր  
քո աչքի գերանը։

Սուրբ Աւետարան։



### Չայն եր.

Աքաղաղը կանչում է, ագռաւը կռկռում։  
Աղաւնին մնչում է, էշը գոզուում։ Կովը պառաչում  
է, կաքաւը կղկղուում։ Աղջը մըրթմըրթում է, խո-  
զը բոհըոխում։ Կաչաղակը կրկըչում է, ճնճղուկը  
ճւճում։ Զին խրխնջում է, արտուտը ծլըլում։  
Շունը հաջում է, կատուն մլաւում։ Բզէզը բզզում  
է, գառը մայում։ Մանուկը լաց է լինում, զանգակը  
զբնգնգում։ Կօշիկը ճռճռում է, քամին մոնչում։

### Առածն եր.

Ամեն օր տատը գաթայ չի ուտիլ։ Անձրեւ օրը  
հաւերին ջուր տուոզ շատ կլինի։ Ասել են՝ առ ու  
տուր, չեն ասել՝ առ ու կուլ։

Աստծու պահած գառը գալլը չի ուտիլ։ Ա-  
ղուէսին հարցըին, վկադ ով է. ասաց՝ պոչս է։ Այն  
ջրից վախեցիր, որ ո՛չ թշշում է, ո՛չ խշշում։ Բա-  
րեկամի հետ կեր ու խում արա, առ ու տուր մի  
անիր։ Գգակս թոզոտ տեսար, հենց իմացար ջա-  
ղացան եմ։ Գալլի գլխին աւետարան կարդացին,  
ասեց՝ շուտ արէք, ոչխարը սարից անց կացաւ։ Ա՛յ  
կուժ, քեզ ասեմ, այ կուլար, դու լսիր։ Մարդու  
աչքը դուրս գալ լաւ է, քան թէ անունը։ Մի ձե-  
ռը ծափ չի տալ։ Մի ծաղկով գարուն չի լինիլ։  
Մինչեւ չիրը կթրջուի, հիւանդի հոգին կթռչի։

### Գող աղուէս:

Աղուէսը պառկեց աղբի տակին, վ՛ուշ-վ՛ույ.  
Աչքը ձգեց չաղ հաւի ձագին, վ՛ուշ-վ՛ույ.  
Նետով կտամ աչքի տակին, վ՛ուշ-վ՛ույ,  
Որ մօտ չգալ նա մեր բակին, վ՛ուշ-վ՛ույ:

### Խորամանկ աղուէսը:

Աղուէսը քաղցած էր: Քանի օր էր, որ խեղ-  
ճը մի կտոր բան բերան չէր դրել: Ման էր գալիս,  
ձեռքը որս չէր ընկնում: Մէկը չկար, որ նրան  
խղճար, մի կտոր միս տար: Դնաց, գնաց, մի տեղ  
շատ վառիկներ աեսաւ: Ուրախացաւ, կանգնեց,  
դունչը սրեց և սկսեց համարել. «Մէկ, երկու,  
երեք, չորս... և փընթփընթաց մինչև տասնումէկ:  
Մտքումն ասում էր: «Ծնչ չաղերն են... ի՞նչ-  
պէս կուտեմ... վիզը, սիրուն վիզը»:


Բայց պառաւն այնտեղ նստած՝ բուրդ է գը-  
գում: Տեսնում է, որ աղբի տակից մի ձայն է գա-  
լիս. շանն է կանչում. «Հափսան»: Պառաւի ձայնի  
վրայ լրում է ամեն ինչ: Ասես աղբի տակին ո-  
ժնչ չկայ. ճանճ էլ թռչի, կլսուի:

Պառաւն իւր գործն է շարունակում. գը՝ զ,  
գը՝ զ, գը՝ զ, բուրդ է գգում: Յանկարծ հաւը սաս-  
տիկ աղմուկ բարձրացրեց: Պառաւն էլ չդիմացաւ.  
վեր կացաւ, ոտի կանգնեց, մօտեցաւ վառիկներին  
և սկսեց համարել. «Մէկ, երկու. երեք... տասը: Էլ՝  
մէկ, երկու, երեք... տասը: Մի խօսքով

որքան համարեց, տասը գուրս եկաւ: «Տղերք,  
հարայ տուեց պառաւը. գալիք մի վառիկ է փախ-  
ցրել, շնուր արէք, ետեկիցը հասէք»:

Տղերքը փալտեր ու բահեր վերցրին, գալիք  
ետեկից ընկան: Ճանապարհին աղուէսին տեսան,  
հարցրին. «Աղուէս եղբայր, գալիքն հօ չես տեսել:  
— Ի՞նչպէս չէ, ասաց աղուէսը, քիչ առաջ տեսի,  
դնչին էլ մէկ վառիկ ունէր, այ, այս ճանապարհով  
գնաց: Տղերքը ճանապարհը բռնեցին, գալիք ետե-  
կից գնացին: Այսպէս աղուէսն իւր գլխից հեռաց-  
րեց նրանց, ինքը կերաւ ու մարսեց վառիկը:

Խեղճ գալիք անունն է կոտրած, աղուէսը աշ-  
խարհք քանդեց:



### Հանելուկներ.

Ասում եմ՝ արի, արի, չի գալիս,  
Ասում եմ՝ մի գար, մի գար, գալիս է:  
Այս թնջն է:

Ուր գնում եմ, գալիս է,  
Ինչ անում եմ, անում է.  
Ծեծում եմ, չի իմանում,  
Բարկանում եմ՝ չի ամաչում:

Կիքը տանում եմ,  
Բայց դարտակ բերում:

Չորս եղբայր,  
Մի գդակի տակ:

Քանի որ ծեծն ուտում էր,  
Ծիծաղու թուլանում էր:

Մէկը կանգնած խօսում է,  
Երկուսը ականջ են դնում,  
Իսկ երկուսը նայում են:



### Չիւն:

Զիւն էր գալիս փաթիլ փաթիլ.  
Աղքատն ասեց՝ տունս բաթիլ.  
Պառաւն ասեց՝ մոզիս կորաւ,  
Գալն ասեց՝ փորիս դեղ է:

### Երկու և մէկ.

Ականջդ երկու, ունիս մի բերան. հասկացիր  
դու լաւ. աշխարհիս վրայ շատ բան կլսես, բայց  
խօսիր սակաւ:

Աչքերդ երկու, մի բերան ունիս, այս լաւ  
հասկացիր. աշխարհիս վրայ շատ բան կտեսնես,  
բայց պատմիր սակաւ:

Երկու ձեռք ու մի բերան դու ունիս, այս  
էլ հասկացիր. միշտ և անդադար պիտի աշխատես,  
բայց սակաւ ուտես:

### Հինգ զգայարանիք:

Աչքով տեսնում եմ, ականջով լսում, քթով  
հոտոտում, լեզուով ճաշակում, իսկ ցուրտն ու տա-  
քը, կոշտն ու կակուզը բոլոր մարմնովս եմ ես  
շօշափում:



### Որբի պահողն Աստուած է.

Փայլուն արել արդէն մալը մտաւ,  
Լուսինն էլ վաղուց գնաց թագկացաւ.  
Խաւար գիշերը աշխարհս պատեց,  
Եւ աշնանալին ցուրտ քամին փչեց:  
Ամեն մարդ գնաց իւր տունը մտաւ,  
Ամեն երեխայ մօր գիրկն ընկաւ.  
Միայն խեղճ որբը չունէր հայր ու մալը,  
Ոչ մի բարեկամ, ոչ քոյր ոչ եղբայր:  
Ոտքերը բոբիկ, տկոր ու քաղցած,  
Մի տան պատի տակ մնաց կուչ եկած:  
Բարի տանտէրը վերեկց նայեց,  
Խեղճ, թշուառ որբին տուն հրաւիրեց:  
Դրանից յետոյ մերկ, քաղցած տղան  
Ունէր իւր համար տէր ու տիրական:



### Չորս եղանակ.

Ձիւնը հալւում է, խոտը կանաչում, ծառերը  
ծաղկում, օրը երկարում: Այս երբ է լինում:

Օրերը տաքացան. վերեկց կարծես կրակ է  
իջնում, սև ու մուժ ամպեր երկինք բարձրացան,  
անձրև թափեցին: Արտերն հասել են, հնձող են  
կանչում: Այս երբ է լինում:

Մարդիկ դուրս եկան, այգին քաղեցին: Օրը  
կարճացաւ, հունձը վերջացաւ. բարակ անձրևը  
բարձրից է մաղում, և մուժ գիշերը չորս կողմդ  
քոնում: Այս երբ է լինում:

Դաշտ ու ձոր ահա ձիւնով ծածկուեցան. ծա-  
ռերից սառցէ շիթեր կախուեցան: Մարդիկ քաշուե-  
ցան իրանց տները, իսկ գազանները՝ իրանց բնե-  
րը: Դուրսը ցուրտ քամին փչում է, փչում և ձիւ-  
նի թեփով աչքերդ լցնում: Այս երբ է լինում:

## Գայլի օրէնքը.

Մէկ փոքրիկ գառը առուի մօտ գնաց, որ քիչ ջուր խմի, ծարաւը կոտրի: Հենց նոյն առուի մօտ միևնոյն ժամին կանգնած էր մի գայլ ու ջուր էր խմում: Գայլը վերև էր, իսկ գառը ներքեւ: Գայլն ուզում էր, որ խեղճ կենդանուն բռնի ու լափի: Համ էլ ուզում էր, որ գործը արդար օրէնքով լինի: Բարձրից ձայն տուեց և այսպէս խօսեց. «Ե՛, անիրաւ գառ, ինչո՞ւ ես ջուրս այդպէս պըղտորում. նայիր, ինչ արիր, այն մաքուր ջուրը ցեխ, աւազ դարձրիր: Եւ այդ պատճառով պիտի պատժեմ քեզ, պիտի քեզ բռնեմ, խեղճեմ և ուտեմ»:

— Տէր իմ, այդ ինչ ես հրամանք անում, գայլին պատասխան տուեց մեր գառը. ես ներքեւուն եմ, դու արդքան վերև: Ուրեմն ինչպէս կարող եմ ես քո ջուրը պղտորել:

«Յանցանք ես գործել, գայլն է ասում, թէ շատ անմեղ ես, այդ միենոյն է, քեզ պէտք է ուտեմ: Զեր ամբողջ ցեղը ինձ թշնամի է, այդ ես լաւ գիտեմ: Միթէ կարծում ես՝ ես մոռացել եմ, թէ երկու տարի սրանից առաջ հենց այս առուի մօտ ինչ արիր դու ինձ:

— Ներեցէք, տէր իմ, դեռ մի տարի էլ չկայ այն օրից, որ ես ծնուել եմ:

«Յիմար ու անմիտ բաներ ես խօսում. թէ դու չես եղել, ուրեմն քո հայրն էր»:

— Ես հայր չունիմ, տէր: «Ուրեմն մայրդ էր: Աստծուն է վկայ, ես մայր էլ չունիմ: «Լովիր, անամօթ, միթէ այդպիսով կարո՞ղ ես քո ծանը յանցանքը ջնջել: Որը կէսօրին լիմար տեղովդ ուզում ես ինձ խարել: Զէ, այդ չես կարող: Ինչ էլ որ լինի, դու յանցաւոր ես. արդարութիւնը պահանջում է, որ քեզ լաւ պատիժ տամ»: Այս ասաց գայլը և անմեղ գառին բռնեց ու լափեց:

## Ոսկին ու երկաթը.

Ոսկին երկաթին մի անգամ ասեց. «Ամենից սիրուն և լաւ մետաղն եմ. ամենքը դովում են ինձ և պատում: Ամեն մարդ սիրում և պաշտում է ինձ: Ես մարդկանց համար փող էլ եմ, զարդ էլ: Ինձնից՝ ինչ ասես՝ մարդը շինում է՝ սիրուն շղթաներ, թանկագին մանեակ, մատանի, քորոց... էլ ինչ երկարացնեմ, առանց ինձ մարդու կեանքը մի բան չէ, դառը տանջանք է: Եթէ ուզենամ, ամբողջ աշխարհը մենակ կգնեմ:

Երկաթն ասեց.—Նատ ես պարծենում, ով սովոր աղայ. բայց ճիշտն ասեմ, իրաւունք ունիս. շատ են մարդիկը քեզ երես տալիս: Բայց մենակ դու չես աշխարհի տէրը: Թէ մարդ ուզենայ ապահով ապրել, ինչ պէտք է ոսկին, երկաթ է հարկաւոր: Ոսկի կացնով չեն մարդիկ փայտ կտրում. ոսկի արօրով չեն արտը վարում. սուր և հրացան ոսկուց

չեն շինում, որ իրանց անձը և իրանց կայքը պահեն, պաշտպանեն գողից, գազանից, թշնամիներից: Խեղճ այլի կինը իւր որբիկներին ոսկի ասեղով չի կերակրում: Ամեն տեղ մարդուն երկաթէ հարկաւոր, թէ չէ քար քարի վրայ չի կանգնիւ: Հա, ոսկի աղայ, ժանդոտ երկաթը շատ բան է անում: Թէ դու կարող ես քո սիրուն փայլով աշխարհը գնել, ես էլ կարող եմ ձեռքիցդ խլել:

### Մ Ե Պ Ո Ւ

Հա, ծաղեցաւ արեգակը,  
Հա, ծաղկեցաւ մանուշակը,  
Մեղուն թողեց իր փեթակը,  
Տըզտըզալով—տըզտըզալով:

Մեղուն թուաւ ծաղկից ծաղիկ,  
Մեղը առաւ քաղցր անուշիկ,  
Մոմը տարաւ հոտոտ, լուսիկ.  
Պըզպըզալով—պըզպըզալով:

Անուշ մեղը մանը տղոց,  
Դեղին մոմը ամեն սրբոց,  
Իսկ չարերին կըճ ու խայթոց,  
Կըճկըճալով—կըճկըճալով:



### Մարդս ապերախտ է.

Մի մարդ կար. ամեն օր հացը որ ուտում, պլծնում էր, աւելացածը տանում, մի սնդուկի մէջ էր դնում, բերանը բաց թողնում, գալիս: Մի օձ էլ ամեն օր բերանով մէկ ոսկի էր բռնում, բերում, սնդուկի մէջ դնում, այնտեղի կերը ուտում, գնում: Մարդն էլ հա գալիս է ոսկին վերցնում, հա կեր դնում:

Մի անգամ օձն էլի մի ոսկի բերաւ, սնդուկի մէջ դրեց և սկսեց կերակուրն ուտել: Մարդն էր, խելքը կորցրեց. սնդուկի կափարիչը վայր ձգեց, փակեց, գնաց: Անց կացաւ մի օր: Մարդը մտածեց իւր արածի մասին, փոշմանեց, ուզեց սնդուկի բերանը բաց անել, բայց վախեցաւ.— Էլինի թէ, մտածում էր նա, օձը դուրս գալ, ինձ թունաւորի: Մտածեց, մտածեց, վերջապէս սնդուկը վեր առաւ, տարաւ մի բարձր սարի գլուխ, այնտեղ թողեց, սնդուկի վրան էլ դրեց. «Ով որ բաց անի, կփշմանի, ով որ բաց չանի, ողջ և առողջ տուն կփնայ»:

Մի հովիւ տեսաւ այդ սնդուկը, գիրը կարգաց. էլ չկարողացաւ իրան պահել, սնդուկի բերանը բաց արաւ: Խոկոյն սնդուկի միջից մի օձ դուրս եկաւ, մօտեցաւ հովուին, որ նրան դեղի, սպանի:

Հովիւն ասաց. «Ինչք ես ինձ սպանում. չէ որ ես քեզ ազատեցի»:

Օձն ասաց.—Նրա համար, որ մարդն ապերախտ է:

Հովիւն ասաց՝ չէ:

Օձն ասաց՝ հա՛:

Հովիւն ասաց.—Գնանք, հարցնենք. թէ որ քո խօսքն եղաւ, բան չկայ, ինձ սպանիր, թէ որ չէ, թո՞ղ գնամ:

Ասաց՝ լաւ:

Գնացին. տեսան, ահա մի եզն է գալիս. նըրան հարցրին: Նա ասաց. «Հա, մարդն ապերախտ է: Քանի որ ես ջահել էի, ոյժս տեղն էր, ինձ պահում, պաշտպանում էին. երբ ծերացալ, ոյժից ընկայ՝ դուրս արին»:

Հովիւն ասաց. «Մէկ էլ հարցնենք:

Օձն ասաց՝ լաւ:

Գնացին. տեսան մի ձի է գալիս: Հարցրին: Սա էլ եղան պէս պատասխանեց:

Հովիւն ասաց. «Մէկ էլ պիտի հարցնենք, որ Աստծու երեքը լրանալ»:

Գնացին. մի աղուէսի պատահեցան, հարցրին: Մարդը նրան աչքով արաւ, ասաց. «Ես քո լաւութիւնը չեմ մոռանալ»: Աղուէսն էլ ասաց.—Չէ, մարդս ապերախտ չէ. նա ամենքիցն էլ բարի է: Օձը որ լսեց, ասաց՝ լաւ, որ ալդպէս է, թող գնայ: Ինքն էլ թողեց, հեռացաւ: Հովիւը աղուէսին ասաց. «Դէ, արի գնանք, քո լաւութիւնից դուրս դամ»: Վեր առաւ, իրանց գիւղը տարաւ, տան մօտ կանգնեցրեց, ասաց.—Դու այստեղ կաց, ես գնամ, քեզ համար հաւ բերեմ: Ներս մտաւ. բայց որ դուրս եկաւ, հաւ չկար հետք, այլ մի մեծ շուն: Նունը աղուէսի վրան յարձակուեց. բռնեց նրան: Հովիւը հասաւ, աղուէսի մորթը հանեց, տարաւ ու ծախեց:

### Ա. զ օ թ-ք.

— Հայր մեր երկնաւոր, Հայր ամեն մարդի,  
Դու ինձ ամեն օր տաս հազար բարի՝  
Կեանք, լոյս, կերակուր, հայր և քաղցրիկ մալր,  
Մեծ ու փոքրիկ քոյր, անուշիկ եղբայր:  
Իսկ ես ինչ ունիմ, որ ինչ տամ քեզի.  
Առջեղ կընկնիմ, կենամ ազօթքի.  
«Ենորհք տուր ինձ, որ ծնողներիս,  
Ուսուցիչներիս և իմ մեծերիս  
Լինիմ սիրելի, իսկ քեզ հաճելի»:



— 42 —

## Աստապատցին ու Շամբցին.

Աստապատցին ու շամբցին եղբայրանում են: Աստապատցին հա շամբ է գնում, վէր է գալիս շամբցու տանը: Շամբցին էլ ինչ յարդանք ու պատիւ ասես, ցոյց է տալիս իւր եղբօրը: Մի օր աստապատցին վեր է առնում, ասում:

—Եղբայր, բա մի օրից մի օր վեր չկենաս մեր տունը գնս: Այսքան պատիւ ես տալիս ինձ, ամօթով եմ մնացել: Մի եկ մեր տուն, տես քեզ բնչպէս եմ պատւում:

Շամբցին մի օր վեր է կենում, ուռած, փքուած գնում Աստապատ: Եղբայրը աչքերը խը- փում է, ունքերը կիտում, գլուխը կախում, նըս- տում: Շամբցին ասում է.

—Եղբայր, ինչի չես խօսում. միթէ ինձ չես ճանաչում:

«Ո՞րտեղից ճանաչեմ, պատասխանում է աս- տապատցին:

— Ախը ես Սարգիսն եմ:  
«Ո՞ւր է այն բախտը, որ Սարգիսն իմ տունը գալ: Ով որ գալիս է, խաբում է, թէ հա ես Սար- գիսն եմ: Դու որտեղի Սարգիսն ես: Սարգիսը որ գար, ոչխար կմորթէի, եղը կմորթէի, պատիւ կը- տալի: Սարգիսը երբ է եկել իմ տունը»:

Շամբցին ալս որ լսում է, մնում է զարմա- ցած. միտք է անում, ասում, — գուցէ ես Սարգիսը չեմ. գնամ, կնկանս հարցնեմ: Գնում է, գետի ա- փին կանգնում ու կանչում. — Այ մարդիկ, էլ, մին իմ կնկանս կանչեցէք: Կնկանը կանչում են. գետի ափին է գալիս: Շամբցին գետի ալս ափից ձալն է տալիս, հարցնում:

— Այ կնիկ, ես Սարգիսը չեմ:  
«Ը, հէր օրհնած, Սարգիսը չես, բա ինչ տա- ւար ես:

## Հանելուկներ.

Կտրում եմ երկարում է,  
Տաշում եմ, հաստանում է.  
Այս ինչն է:

Տաշած փալտի փորումը  
Անշունչ առիւծ է կենում.  
Նրա տուած հարուածը  
Միս ու ոսկոր է փշրում:  
Այս ինչն է:

Աչքեր ունի, ոտքեր չունի,  
Մարդ է սպանում, ձեռքեր չունի,  
Զու է ածում, փետուր չունի:  
Այս ինչն է:



Պառաւն ու այծը.

Գիւղում ապրում էր  
Մի աղքատ պառւիկ.  
Խեղճն ունէր միայն  
Կաթնատու այծիկ,  
Զալիկ-մալիկ  
Կաթնատու այծիկ:  
Պառաւը ձմեռը  
Այծիկը պահեց,  
Իւր բերնի պատառը  
Նրա հետ կիսեց,  
Սիրով-լօժար  
Նրա հետ կիսեց:  
Զիւնը հալուեցաւ,  
Բսաւ կանաչ խոտ,  
Պառաւն այծիկը  
Դուրս տարաւ արօտ.  
Ուրախ-զուարթ  
Դուրս տարաւարօտ:

Քամի բարձրացաւ,  
Երկինքը մթնեց,  
Թանձը մառախուզը  
Գետինը պատեց,  
Պառաւի առջեից  
Այծը կորցրեց.  
Ավանս, ափսնս,  
Այծը կորցրեց:  
Պառաւը տիրեց,  
Իսկ գալլը խնդաց.  
Մոլորուած այծիկը  
Բարձը մկրկաց,  
Մըկը՝ կ-մըկը՝ կ,  
Բարձը մկրկաց:  
Գալլը մօտ եկաւ,  
Այծին շալակեց,  
Պառաւը ետեից  
Բարձրաձայն գոչեց.  
«Հարայ-հայ-հարայ»,  
Բարձրաձայն գոչեց:  
Գալլն այծին տարաւ.  
Պառաւը կանգնած՝  
Կանչում էր այծին  
Մի փունջ խոտ բռնած.  
«Եկ-եկ-եկ-եկ»,  
Կանչում էր այծին:

## Բ ա ն ջ ա ր ա ն ո ց .

Մեր տան առաջին կալ մի բանջարանոց։ Բանջարանոցը պատած է ցանկերով։ Այնտեղ կան մարդեր։ Մարդերում լախուր, սոխ, բողկ, լոբի, բակլայ, մաշ, վարունկ ու ծաղիկներ են ցանած։ Բանջարանոցում խոտ ու ծառեր էլ կան։

## Ա ն տ ա ռ .

Ի՞նչ գեղեցիկ է անտառը։ Ինչքան որ ներս են գնում, այնքան լուս է, այնքան սիրուն և գեղեցիկ է։ Բարձր-բարձր ծառեր ենք տեսնում՝ կաղնի, հացի, բարդի, լորի, թեղի, թեղոշի, ճապկի։ Ծառերի միջով կապոյտ երկինքն է երեսում։ Ճիւղերի վրայ հազարաւոր թուզուններ են երգում։ Անտառի մէջ թուփեր էլ կան։ Ծառերի տակ, թթվերի մէջ շատ կենդանիներ են ապրում՝ նապաստակ, աղուէս, եղջերու։ կան և գիշատող գազաններ՝ գալլ և արջ։

## Ո ս կ ու Շ ա ն ք լ ո .

Կար չկար մի ծերունի։ Սա հիւանդացաւ։ Մեռնելուց առաջ որդոցը կանչեց և ասաց. «Ո՛ղդիք, ես մեռնում եմ և ձեզ համար միայն այս տունն ու ալդին եմ թողնում։ Ուղիշ բան չունիմ,

որ ձեզ տամ. բայց այդու մէջ շատ գանձ կալ թաղուած։ վորեցէք և անպատճառ կգտնէք»։

Ծերունին մեռաւ։ Որդիքն սկսեցին այդին փորփռել։ Փորեցին, փորեցին, բան չգտան. բայց մի տարի որ անցաւ, այդին առատ խաղող տուաւ։ Որդիքը խաղողից գինի շինեցին, ծախեցին, լաւ փող ձեռք բերին։ Այդ ժամանակ միայն նրանք հասկացան, թէ ծերունին ի՞նչ գանձի մասին էր խօսում։ Եւ այդու վրայ ոսկի տառերով գրեցին. «Աշխատասիրութիւնն է ոսկու հանքը»։

## Խ ե լ օ ք ի ս օ ս ք ե ր .

Ի՞նչ կ'անես՝ արա, որդի,  
Զար ընկերի հետ մի մնար.  
Ինչ կանես՝ արա, որդի,  
Լաւ ընկերից յետ մի մնար։

Փնջի միջում ձնծաղիկը  
Մանուշակի հոտն է առնում։  
Լաւ ընկերի հետ մանուկը  
Լաւութիւնն է վեր առնում։

Վայր ընկնողի ձեռքից բռնես,  
Աստուած քո ձեռքից կբռնի,  
Վայր ընկնողին ոտքով խփես,  
Աստուած էլ գլխիդ կխփի։

## Ս Ե Ն Ե ա կ.

Մեր սենեակն ունի յատակ, առաստաղ և չորս  
պատ՝ աջակողմեան, ձախակողմեան, առաջակողմեան  
և յետելի: Առաստաղն սպիտակացըրած է. յատակը  
ներկած է դեղին գոյնով: Պատերը ծածկուած են  
գեղեցիկ պատառներով: Պատերում շինուած են  
դռներ և լուսամուտներ: Սենեակի մէջ կան վա-  
ռարան, սեղան, գարանակ, պահարան և շատ  
աթոռներ: Պատերից կախուած են հայելի, ժամա-  
ցոլց և պատկերներ: Վառարանը վառում ենք ձը-  
մեռը: Սեղանի վրայ բան ենք անում, ճաշ և ըն-  
թիք ենք ուտում, թէյ ենք խմում կամ գրում ու  
կարգում ենք: Կարանակի մէջ մեր սպիտակեղէնն  
ենք պահում, իսկ պահարանում՝ մեր զգեստները:  
Սենեակը մեզ պահպանում է արևից, անձրևից,  
քամուց և ցըտից:

## Դաստիուն.

Երեխաները նստարանների վրայ կարգով նըս-  
տուած՝ նայում են ուսուցչին: Ուսուցիչը դաս է  
պատմում: Նա խօսում է անասունների, թռչուն-  
ների, ծաղիկների, մարդկանց և բարերար Աստծու  
մասին: Ուսուցիչը հարցնում է, երեխաները պա-  
տասխանում են: Սրանք պատմում են, կարգում  
են, գրում, թռում, զծագրում ու երգում են: Ծոյլ  
աշակերտներն են, որ ոչինչ չեն անում: Զանասէր

## Ս ո ր ա ա լ ի.

Եկէք, ընկերներ, եկէք,  
Զեռք ձեռքի տանք, պար բռնենք,  
Այսօր տարին նորոգուեց,  
Նոր օր, նոր բախտ մեզ բերեց:  
Հինն անցաւ,  
Նորն եկաւ,  
Բարնվ, բարնվ, բարնվ:  
Մայրիկն այսօր մեզ տուեց  
Մեղք ու չամիչ և ասեց.  
«Քաղցր ու անուշ պառաւէք,  
Ալեորիք և տեսնէք  
Նատ տարի,  
Նատ բարի:  
Բարնվ, բարնվ, բարնվ»:  
Ենորհաւոր նոր տարի,  
Քո գալուստը շնորհաւոր.  
Դու մեզ համար այս տարի  
Բարի եղիք ամեն օր՝  
Մինչեւ կաս  
Ու երթաս  
Բարնվ, բարնվ, բարնվ...



աշակերտներն իրանց ծնողներին և ուսուցիչներին  
ուրախացնում են: Աստուած էլ է սիրում բարի և  
ջանասէր երեխաներին:



## Էշն ու շունը

Էշն ու շունը մի ճանապարհով գնում էին:  
Ճանապարհին մի խոտաւէտ տեղ կանգնեցին, որ  
հանգստանան: Երկուսն էլ յոգնած էին, երկուսն  
էլ սոված: Էշն սկսեց կանաչ խոտը ախորժակով  
արածել: Շունն ուտելու բան չունէր:

— Ընկեր ջան, շունն ասաց էշին, խոռջինու-  
մբ հաց կայ, մի կտոր ինձ տուր, ուտեմ:

«Ի՞նչ ես անում հացը. այստեղ շատ խոտ  
կալ, կեր՝ որքան ուզում ես»:

— Ե՛շ բարեկամ, ես խոտ չեմ կարող ուտել,  
սովոր չեմ: Աղաչում եմ, մի կտոր հաց տուր, անօ-  
թի եմ:

Էշն այս անգամ էլ շան աղաչանքին ականջ  
չդրեց, գլուխը քաշ գցեց և աջ ու ձախ հնձելով  
անուշ խոտն՝ ուտում էր:

—

Որտեղից որ էր՝ թփերի տակից միգայլ դուրս  
եկաւ: Էշին որ տեսաւ, համարձակ կերպով առաջ  
վագեց. իսկ երբ աչքը շան վրայ ընկաւ, կանգնեց,  
դունչը երկարացրեց և տիսուր ձայնով օռնաց:

Էշը զարհուրեց. մօտեցաւ շանը և դողդողա-  
լով ասաց: «Ի՞մ սիրելի ընկեր, իմ անգին բարեկամ,  
ահա քեզ բոլոր հացը. կեր՝ որքան ուզում ես.  
միայն այս չար գազանի ատամներից ինձ ազա-  
տիր»:

Շունը երեսը շուռ տուեց, պատասխանեց.  
— Դու արժանի չես, որ ես քո հացի պռունկը կըտ-  
րեմ. սովածութիւնից ես չեմ մեռնիլ. անտառը  
կմտնեմ, ինձ համար ուտելու բան կդտնեմ: Դու  
էլ քո գլխի ճարը տես:

Ասաց շունը և հեռացաւ: Գայլն էլ այդ էր  
ուզում. վրայ վագեց, մի լոպէի մէջ էշին պատա-  
ռոտեց:

## Ստախօս հովիւր.

Մի հովիւր սովորութիւն էր արել՝ խաբել իւր  
ընկերներին: Նատ անգամ նա երկիւղալի ձայնով  
կանչում էր. «Գայլ եկաւ, գալլը եկաւ»: Հովիւրը  
վազում, գալլս էին, տեսնում, որ գայլ չկայ: Իսկ ստա-  
խօս հովիւր ծաղրում և ծիծաղում էր նրանց վրայ:

Մի օր այս հովուի հօտի վրայ մի գայլ յար-  
ձակուեցաւ: Նա սկսեց աղաղակել. «գալլը եկաւ,  
գալլը եկաւ»: Ընկերները կարծեցին, թէ նա էլի  
խաբում է, աեղներիցն էլ չշարժուեցան:

Գալլը նրա հօտի մէջն ընկաւ և պատառոտեց ոչ  
խարներին:

### Հանելուկ.

Մի քոյր ունինք և մի եղբայր,  
Որ ապրում են երկնքումը.  
Առաւոտեան մէկն է ծնւում,  
Երեկոյին կրկին մեռնում.  
Երեկոյին միւսն է ծնւում,  
Առաւոտեան կրկին մեռնում:

### Գոյներ.

Զիւնն սպիտակ է: Ածուխը սև է: Մոխերը  
գորշ է: Ոսկին գեղին է: Խոտը կանաչ է: Երկին-  
քը կապուտ է: Արիւնը կարմիր է:

Կաթն սպիտակ է: Թանաքը սև է: Ամպերը  
գորշ են: Դեղձանիկը գեղին է: Մանուշակը կա-  
պուտ է: Վարդը կարմիր է:

### Արև.

Արև, արև, դու մեզանից  
Երբ հեռացար դէպ հարաւ,  
Չմեռն եկաւ և ամեն ինչ  
Յափշտակեց ու տարաւ:

Աստուած սիրես, Էլ չգնաս,  
Այլ միշտ մնա դու մեզ մօտ.  
Քեզ կպատուենք, քեզ կդովենք  
Ամեն ըիկուն, առաւօտ:

### Գիւղացիք և արև.

Կէս օր էր: Սև սև ամպերը հաւաքուեցան,  
Երար վրայ դիզուեցան: Մթնեց. Շ... գիւղացիք էլ  
արևի երես չտեսան: Անց կացան երկու օր, երեք  
օր, չորս օր... արև չկայ: Գիւղացիք ասացին.  
«Արև մեզնից խռովել է, գնանք ման գանք,  
գտնենք և հետը հաշտուենք»:

Գնացին, սար ու ձոր ընկան, ոչինչ չգտան:  
Վերջը յետ դարձան. ճանապարհին տեսան մի ծա-  
կում մի բան պսպղում է: Ասացին. «Այս է, արևը  
գտել ենք: Ում ուղարկենք կուշը, ում չուղարկենք,  
որ մեզ հետ հաշտեցին»: Մտածեցին, այդ էլ գը-  
տան.—Տէրտէրի հետ բարեկամ կլինի, ասացին,  
տէրտէրին ուղարկենք գնայ, հաշտեցին:

Տէրտէրին բերին, գլուխը փոսը ճիտեցին,  
հայ սպասեցին, թէ տէրտէրը դուրս է գալու: Բայց  
տէրտէրը դուրս չի գալս: Սպասեցին, սպասեցին,  
վերջը դուրս քաշեցին, տեսան, որ գլուխ չունի:  
Իրար հարցը բին. «Տէրտէրը գլուխ ունէր»: Մէկն  
ասում է՝ ունէր, միւսը՝ թէ չունէր: Գնացին, տի-  
րուհուն կանչեցին: Ասացին.

—Տիրուհի, տէրտէրը գլուխ ունէր:

«Զեմ գիտում, ասաց տիրակինը, գլուխը միտքս չէ. միայն հաց ուտելիս մի բան դըմքըմըում էր»:

## Ա. Ր Ա.

Արև-արեւ, դուրս արի,  
Քեզ բերել ենք աչքալոյս.  
Քո քուրիկը՝ լուսինկան,  
Բերաւ չամիչ մէկ աման.  
Ամպը եկաւ, մութ արաւ,  
Չամիչն աչքիցս կորաւ:  
Բաց երեսդ, արեգակ,  
Մէկ բուռ չամիչ քեզ կտանք»:  
— Օ՛խ, արևսին խաբեցինք,  
Ամպի տակից հանեցինք:

## ԿԵՆԴԱԿԻՆԵՐԻ ՎԵճՐ.

Եզր, կովը և շունը վիճում էին միմեանց հետ: Ամեն մինը պնդում էր, թէ տէրը ամենից շատ ինձ է սիրում:

— Ի հարկէ, նա ինձ ամենիցդ շատ է սիրում, ասաց եզր: Ես եմ նրա արօրն ու տափանը քաշում, ես եմ նրա համար անտառից փայտ բերում: Նա ինձ է լծում սալին և իւր ցորենը ջրաղաց տանում, աղում, ալիւր շինում: Յետոյ էլի ես եմ տանում քաղաք, ուր նա ծախում է այդ

ալիւրը, փող ձեռք բերում, առուտուր անում, երեխաների համար հագնելիք առնում: Ի՞նչ էք կարծում. ես որ չլինէի, նա ինչպէս կարող էր ապրել:

— Այդ ճշմարիտ ես ասում, ասաց կովը: Բայց մեր տէրն ինձ ամենիցդ աւելի որ սիրում է, այդ նրա համար է, որ քեզ պէս աշխատասէր ու ժրածան Եզնուկին ես եմ պահել, մեծացրել: Մեր տէրը, նրա հայրն ու մայրը, նրա կինն ու երեխաներն իմ կաթովս են ապրում: Այն մածունն ու կարագը, այն սէրն ու կաթը, այն եղն ու պանիրը, այն տաք-տաք թանէսպասը, որ ամեն օր խպշտում են, ում տուածն է: Եթէ ես չլինիմ, բոլորը քաղցած կկոտորուին:

— Դու էլ ես ճշմարիտ ասում, սիրուն կովիկ, սկսեց շունը: Ո՞վ կարող է ուրանալ քո լաւութիւնը: Նատ անգամ ես էլ եմ քո տուած անուշ թանին մասնակից լինում: Մեր տանտիկինն ամեն խնոցի հարելիս՝ թանիցն ինձ բաժին է տալիս: Ով որ քո լաւութիւնն ուրանալ, երկու աչքով կուրանայ: Ես շատ երախտագէտ եմ. ուրիշի լաւութիւնը չեմ մոռանալ: Բայց դուք մի նեղանաք, որ մեր տէրն ինձ ամենիցդ էլ շատ է սիրում: Լսեցէք, ասեմ, թէ ինչ է դրա պատճառը:

Եւ շունն սկսեց մէկ-մէկ հաշուել, թէ ինքն ինչ ու ինչ է անում: Հաչեց, հաչեց, այնքան հաշեց եղան ու կովի վրայ, որ տէրն իմացաւ, գնաց, շան լեզուիցը նրանց ազատեց, ասաց. «Զօւր էք միմեանց հետ վիճում: Երեքդ էլ ինձ հարկաւոր էք. ոչ մէկդ չէք կարող միւսի արածը անել. դրա

Համար ես ամենիդ էլ սիրում եմ, դուք էլ սիրեցէք միմեանց:



### Սագն ու բաղը.

Սագն ու բաղը մի օր գնացին մի լճակի ափ, որ համ լողանան, համ մի բան գտնեն, ուտեն, կշտանան: Լողացան, պրծան, լճից դուրս եկան, ափին շրջեցին, քիչ էլ բան կերան, յետոյ յետ դարձան այսպիս խօսելով.

Սագն ասաց. «Բագիկ, տեսնո՞ւմ ես, թէ ի՞նչ շնորհքով թռչուն եմ: Զրումը լողում, օգում թըռչում եմ, գետնի վրայ ման եմ գալիս ազտոտ: Ասա, խնդրում եմ, երկրի վրայ կայ ուրիշ կենդանի ինձ պէս շնորհալի: Ես թռչուների թագաւորն եմ:»

— Իմ միտքն էլ այդ էր, բագն ասաց սագին. կասկած չկայ, որ դու շատ ընդունակ, շնորհքով թռչուն ես: Բայց ես էլ քեզնից կարծեմ պակաս չեմ: Տես՝ թէ ես ի՞նչպէս ջրի երեսին սուրուր եմ տալիս, խաղում փրփրուն ալիքների հետ, ի՞նչպէս եմ ջրի լատակը մտնում, մանրիկ ձկներ ու ճիճուներ բռնում, նորից դուրս գալիս ուռած ու փքուած՝ թագուհու նման: Հա, հա, ընկերս, մենք զարմա-

նալի շնորհքով թռչուն ենք: Երկրիս երեսին մեզ պէս ընդունակ կենդանի չկայ:


Նոյն լճի ափին մի ծառի վրայ ագռաւը նրանց՝ սագին ու բաղին ականջ էր դնում: Երբ բաղն իւր խօսքը վերջացրեց, ագռաւը կանչեց. «Անմիտ թռչուններ, ինչք համար էք դուք հիմարտանում: Ասա ինձ, սագիկ, միթէ կարող ես շան նման վազել»:

— Ոչ, պատասխանեց սագը ագռաւին: «Իսկ գու, այ բաղիկ, ծիծենակի պէս կարող ես թռչել:

— Զեմ կարող, ասաց: «Զեզանից ո՞րը կարող է ջրում ձկան պէս լողալ:»

Պատասխանի տեղ ամեն մէկն իւր գլուխը կախեց:

— Ուրեմն էլ ինչո՞ւ էք հիմարտանում: Կարծեմ, ընկերներ, աւելի լաւ է մի բան իմանալ, բայց շատ հիմնաւոր, քան թէ շատ ու շատ բռներ իմանալ՝ բոլորն էլ թերի:





### Բադիկ.

Բադիկ, բադիկ,  
Կարմիր թաթիկ,  
Ուր ես գնում կամաց-կամաց,  
Չափուկներդ չորս կողմդ առած:  
—Ես գնում եմ ջուր գտնելու,  
Չափուկներս լողացնելու,  
Չափուկներս մաքուր-մաքուր,  
Ծոյլ տղորցը երեսն է մուր:

### Աղուէսն ու կաքաւը.

Աղուէսը կաքաւին բռնեց:  
Կաքաւն ասաց. «Աղուէս, ինձ ի՞նչ պիտի անես»:  
Ասաց. —«Եղ պիտի ուտեմ»:  
Կաքաւն ասաց. «Փառք տուր Աստծուն, յետոյ կեր»:  
Հէնց որ աղուէսը բերանը բաց արաւ, որ  
փառք Քեզ Աստուած ասի, կաքաւը բերանից դուրս  
թռաւ, փախաւ:

Աղուէսն ասաց. «Քանդուի այն մարդու տունը,  
որ մինչև կուշտ ուտելը Աստծուն փառք է տալիս»:  
**Ուղերն ու գայլը.**

Եղել է, չի եղել մի այծ: Սա եօթն ուլ ունէր. շատ էր սիրում նրանց: Մի օր այծը անտառ  
պիտի գնար, որ իւր ուղիկների համար խոտ բերէր: Գնալուց առաջ ուղիկներին կանչեց, ասաց.  
«Ես անտառ եմ գնում. զգոյշ կացէք. եթէ զար-  
լին ներս թողնէք, ձեզ ամենիդ էլ կուտի: Նա  
շատ խորամանկն է, կաշխատի ձեզ խաբել, բայց  
դուք նրան կճանաչէք կոպիտ ձայնիցն ու սև ոտ-  
ներիցը»: Ուղիկներն ասացին. «Սիրելի մայրիկ, որ-  
տեղ ուզում ես՝ գնա և սիրտդ հանդիստ պահիր,  
մենք զգոյշ կմնանք»:

**Մայլը մկրկաց ու գնաց:**

Շատ անցաւ, քիչ անցաւ, յանկարծ մէկը դու-  
ռը թըլսկթըլսկացը ու կանչեց. «Դուռը բաց ա-  
րէք, իմ սիրելի ուղիկներ. ձեր մայրն եկել է և  
ձեզ համար բան է բերել ուտելու»: Բայց ձայնը  
կոպիտ էր. ուղիկներն իմացան, որ նա գալին է:  
Մենք դուռը չենք բանալ, պատասխանեցին. դու-  
մեր մայլը չես. նրա ձայնը բարակ է ու քնքոյշ.  
իսկ քո ձայնը կոշտ է ու խռպոտ. դու գայլն ես:

**Գայլը տեսաւ,** որ իրեն ճանաչեցին, գնաց մի  
մանրավաճառի մօտ և մի մեծ կտոր կաւիճ գնեց:

Կաւիճը կերաւ և գրանով իւր ձայնը բարակացրեց։ Յետոյ յետ եկաւ, ծեծեց դուռն ու կանչեց։ «Դուռը բաց արէք, իմ սիրելի՝ ուղիկներ, ձեր մայրը եկել է, ձեզ համար ուտելու բան է բերել»։ Գալլըն իւր սև թաթերը պատուհանի վրայ էր դրել։ Ուղիկներն այդ տեսան և աղաղակեցին։ «Զե՞նք բանալ, մեր մօր ոտները սև չեն. դու գալլն ես»։

Գալլը վազեց, հացթուխի մօտ գնաց, ասաց. «Ոտս ծակել եմ, մի փոքր խմոր քսիր»։ Հացթուխը նրա թաթին խմոր քսեց։ Գալլը վազեց, ջրաղացանի մօտ գնաց և ասաց. «Թաթիս մի քիչ ալիւր թափիր»։ Ջրաղացպանը ասաց. «Ես այդ չեմ անիլ, դու ուղում ես մէկին խաբել»։ — Եթէ չանես քեզ կուտեմ, պատասխանեց գալլ։

Ջրաղացպանը վախեցաւ և գալլի թաթին ալմուր թափեց։

Երրորդ անգամ գալլը գնաց, ուղիկների դուռը ծեծեց, ասաց. «Դուռը բացէք, ուղիկներ, ձեր մայրը տուն է եկել և անտառից ձեզ համար ուտելու բան է բերել»։ Ուղիկներն ասացին. — Թաթերդ տեսնենք, յետոյ։ Գալլն իւր թաթը պատուհանի վրայ դրաւ, ուղիկները տեսան, որ սպիտակ է, դուռը բաց արին։

Բաց արին դուռը ու մէկ էլ տեսան, որ ներս մտնողը գալլն է։ Սրտաճաք եղան։ Մէկը վախաւ, սեղանի տակ թագկացաւ, երկրորդը անկողնում, երրորդը վառարանում, չորրորդը խոհանոցում, հինգերորդը պահարանում, վեցերորդը մի անկիւ-

նում, եօթներորդը պատի ժամացոյցի արկղի մէջ։ Բայց գայլը ամենքին էլ գտաւ, բռնեց, կլանեց։ Միայն ամենից պստիկին չգտաւ, որ թագ էր կացել ժամացոյցի արկղի մէջ։ Գալլն այդպէս լաւ կշտանալուց յետոյ դուրս գնաց և անտառի մէջ մի ծառի տակ պառկեց, քնեց։


Քիչ անցաւ. այծը անտառից տուն վերադարձաւ. Եւ ինչ տեսաւ. տան դուռը կրբնկան վրայ բաց, սեղանը. աթոռները և նստարանները գլխիվայր գլորուած, վերմակն ու բարձերը ցըիւ տուած։ Նատ դէս ու դէն ընկաւ, որոնեց, որոնեց, բայց ուղիկներ չգտաւ։ Սնունները տուաւ, մէկ մէկ կանչեց. ոչ մէկը ձայն չտուաւ։ Աերջապէս հասաւ ամենափոքրին, կանչեց և մի ձայն լսեց. «Սիրելի մալրիկ, ես թագ եմ կացած ժամացոյցի արկղի մէջ»։ Այծը մօտեցաւ, արկղիցը նրան հանեց։ Ուղիկը մէկ մէկ պատմեց, թէ ինչպէս գալլն եկաւ և միւս ուղերին բռնեց, կերաւ։ Խեղճ ալծը շատ տիրեց. մկրկաց, մկրկաց, իւր սև օրը լաց եղաւ։ Յետոյ ուղիկի հետ դուրս եկաւ և անտառը վազեց։ Գնացին, գնացին, տեսան գալլը մի ծառի տակ պառկած։ Այծը գալլին ամեն կողմից մի լաւ տնտղեց, տեսաւ, որ նրա փորումը մի բան է շարժւում։ Ասաց. «Այս Աստուած, իմ ուղիկներս գեռ կենդանի են»։

Այծն ուղիկին տուն ուղարկեց. ասեղ ու թել բերելու։ Մկրատով գալլի փորը ճղեց։ Հէնց որ մի

ծակ բացուեցաւ, իսկոյն մի ուլիկ գլուխը դուրս հանեց: Այծը գալիք փորը աւելի ճղեց. մէկը միւսի ետևից դուրս պրծան բոլոր ուլիկները: Ամենքը շատ ուրախացան: Այծն ասաց. «Այժմ, իմ ուլիկներ, գնացէք, քարեր հաւաքեցէք, բերէք. գալիք փորը քարերով պիտի լցնեմ»: Ուլիկները աջ ու ձախ ընկան, քարեր հաւաքեցին, բերին, գալիք փորը լցրին: Յետոյ այծը թել ու ասեղն առաւ, փորի ճղուած տեղը կարեց, որ գալլը ոչինչ չիմանայ:

Վերջապէս գալլը զարթնեց, վեր կացաւ, կանգնեց: Նա շատ ծարաւ էր. ուզեց գնալ և ջրհորից ջուր խմել: Ոտները փոխեց թէ չէ, քարերն սկսեցին թըխկթըխկալ: Զարմացաւ գալլը, ասաց. «Այս ի՞նչ է իմ փորումս չըխկչնկում. միթէ կերած ուլիկներս քարեր են դարձել»: Ջրհորին հասաւ. կռացաւ, որ ջուր խմի, բայց քարերի ծանրութիւնից ինքն իրան չկարողացաւ պահել, ջրհորի մէջ ընկաւ և խեղդուեց:

Ուլիկները թագ կացած՝ նայում էին. երբ այդ տեսան, մօտ վագեցին և «գալլը պրծաւ, գալլը խեղդուեց» աղաղակելով՝ ջրհորի մօտ իրանց մօր հետ պարում էին:



## Աշոտի և Հայկի վեճը.

Մի անգամ Աշոտն ու Հայկը վիճում էին միեւնաց հետ: Նրանցից ամեն մինն ուզում էր ցոյց տալ, թէ ինքն աւելի բան գիտէ, թէ ինքն աւելի հասկացող է: Նատ վիճեցին, վերջը Հայկն ասաց. «Աշնա, ի՞նչ ենք շատ խօսում, արի ես հարցեր տամ, դու պատասխանիր, դու էլ հարցեր տուր, ես պատասխանեմ. տեսնենք ով լաւ պատասխաններ կտայ:

— Լաւ, ասաց Հայկը, բայց առաջ ես պիտի հարցնեմ:

«Ի՞նչ անենք, դու հարցրու:

Հայկն սկսեց. — Աշնա, սեղանն ի՞նչ է:

— Սեղանը կարասիք է:

«Բաժակն ի՞նչ է:

— Բաժակն աման է:

«Բա քորոցը, մկրատն ու կացինը ի՞նչ են:

— Քորոցը, մկրատն ու կացինը գործիք են:

«Լաւ, Աշոտ, ասա տեսնենք, թէ գերանդին, մանգաղը, ցաքանը, գութանը, արօրը, մուրճը, սղոցն ի՞նչ բաներ են:

— Է՛հ, նոր բան ասա. դրանց ընկերների մասին արգէն պատասխանեցի:

«Տետրակն ի՞նչ է:

— Տետրակը դասական առարկայ է:

«Իսկ վէգը:

— Խաղալիք է:

«Կատուն ի՞նչ բան է:  
— Զորքոտանի կենդանի է:  
«Դսկ սոխանկը:  
— Սոխակը թռչուն է:  
«Ի՞նչ բան է գեղարքունին:  
— Գեղարքունին ձուկն է:  
«Դսկ օձն ու մողէսը, ճանճն ու թիթէուը:  
— Օձն ու մողէսը սողուններ են, ճանճն ու  
թիթեռը՝ միջատներ:  
«Ի՞նչ բաներ են հացին, կաղնին, խնձորենին,  
ընկուզենին, վարդենին և մասրին:  
— Հացին, կաղնին, խնձորենին, ընկուզենին  
ծառեր են, իսկ վարդենին ու մասրին՝ թփեր:  
«Լաւ, Աշոտ, ամենն էլ իմացար. ալժմ դժւ  
հարցրու:

Աշոտն ուրախ ուրախ սկսեց. — Հայկ, ի՞նչ բա-  
ներ են սիսեռը, լոբին, բողկը...  
«Ոիսեռը, լոբին, բողկը, թէ ուզում ես և  
սոխը՝ բանջարեղէններ են:  
— Ի՞նչ բան է թրթնչուկը:  
«Խոտ է:  
— Ի՞նչ է մանուշակը:  
«Մանուշակը ծաղիկ է:  
— Ի՞նչ բաներ են ոսկին ու արծաթը:  
«Ոսկին ու արծաթը թանգագին մետաղներ են:  
— Դսկ երկաթն ու պղինձը:  
«Հասարակ մետաղներ են:  
— Ի՞նչ բաներ են աղամանդն ու զմբուխտը:

«Թանգագին քարեր են:  
— Իսկ հասարակ քարերը որոնք են:  
«Չէշաքարը, կայծքարը, կրաքարն ու որձա-  
քարը հասարակ քարեր են:  
— Ի՞նչ բաներ են կաւն ու կիրը:  
«Կաւն ու կիրը հողեր են:  
— Լաւ, բա այդ թռչունները, գազանները,  
ձկները, սողունները, միջատները, ծառերը, թփե-  
րը, մետաղները, քարերը ի՞նչ բաներ են:  
«Թռչունները, գազանները, ձկները, սողուն-  
ները, միջատները կենդանիներ են. ծառերը, թփ-  
երը, հացաբոյսերը, բանջարեղէնները, խոտերը  
բոյսեր են. մետաղները, քարերը, հողերը հան-  
քեր են:

Աշոտը լուռ կացաւ, կանգնեց: Հայկն ասաց.  
— Սրանից ի՞նչ դուրս եկաւ. քո հարցերին պես  
պատասխանեցի, իմ հարցերին՝ դու:

Մայրը, որ ծածուկ լսում էր եղբայրների վի-  
ճը, ասաց. «Թրանից այն գուրս եկաւ, որ երկուսդ  
էլ ձեր դասերը լաւ էք սովորել: Ապրէք»: Ասաց  
ու երկուսին էլ համբուրեց:





Տատն ու կովը.

Սրի, իմ կովիկ,  
Հազրել եմ կովկիթ,  
Պալրգեմ տակիդ,  
Զգեմ քո պտիկ:  
Մի վախիր, կովիկ.  
Հորթիդ կտամ կաթ,  
Նրա համար մաս  
Կթողնեմ առատ:  
Կանգնիք, իմ կովիկ,  
Պալրգեմ տակիդ,  
Զգեմ քո պտիկ,  
Լցնեմ իմ կովկիթ:

«Հաւատացի քեզ,  
Ով դու իմ տատիկ,  
Յանձնում եմ ես քեզ  
Կաթնով լի կրծիկ:  
Կովը լի կուրծը  
Բացեց համարձակ,  
Կաթն իւր կրծից  
Վէր թողեց արձակ:

Բայց անգութ տատը  
Բոլորը մզեց,  
Խեղճ հորթի համար  
Կաթիւ չժողեց:

Հ է ք ի ա թ.

Եղել է մի թագաւոր: Առ երեք տղալ ունէր.  
ամենից փոքրը քաշալ: Մեռնելու ժամանակ թա-  
գաւորը մեծ տղին կանչեց. ասաց. «Ո՛րդի, տես,  
Ես մեռնում եմ, երեք օր վախ կայ, թշնամիներս  
կգան, գերեզմանից ինձ կհանեն: Առաջին գիշերը  
դու պէտք է գաս, գերեզմանս պահպանես»:

Տղան ասաց՝ լաւ:

Քիչ լետոյ թագաւորը կանչեցիմիջնակ որդուն,  
ասաց. «Ո՛րդի, ես մեռնում եմ. երեք օր վախ  
կայ. թշնամիներս կգան, գերեզմանից ինձ կհա-  
նեն. Երկրորդ գիշերը դու պէտք է գաս, գերեզ-  
մանս պահպանես»:

Տղան ասաց՝ աչքիս վրայ:

Քիչ լետոյ թագաւորը փոքր տղին կանչեց,  
ասաց. «Ո՛րդի, ես մեռնում եմ, երեք օր վախ  
կայ. թշնամիներս կգան, գերեզմանից ինձ կհա-  
նեն: Երրորդ գիշերը դու պէտք է գաս, գերեզ-  
մանս պահպանես»:

Տղան ասաց՝ գլխիս վրայ:

Թագաւորը մեռտւ: Տղերքը նրան առօք-փա-  
ռօք թաղեցին:

Միւս օրը փոքր եղբայրը մեծին ասաց.

— Այսօր քո հերթն է, գնա՞ մեր հօր գերեզ-  
մանը պահպանիր:

Նա ասաց. «բան, շատ հարկաւոր է: Ես գը-  
նում եմ իմ աներենց տուն»: Ու գնաց:

Փոքր եղբայրն է, վեր է կենում, նետ ու  
աղեղ վերցնում, գնում, հօր գերեզմանի մօտ մի  
փոս փորում, մէջը մտնում, թագ կենում: Այդ-  
տեղ մի քիչ մնաց, մէկ էլ տեսաւ, ահա մի սպի-  
տակ մարդ է գալիս, սպիտակ ձիու վրայ նստած,  
շորերը, զէնքերը և ամեն ինչ սպիտակ, մի սպի-  
տակ շուն էլ հետը: Ձիաւորն եկաւ, թագաւորի  
գերեզմանին մօտեցաւ, ասաց. «Թագաւոր, անի-  
ծուես դու»: Եւ իսկոյն նիզակը գերեզմանի տա-  
կովը տուաւ, որ քարը դէն գցի: Թագաւորի փո-  
քը որդին փոսից նետը արձակեց, ձիաւորին սպա-  
նեց, յետոյ դուրս եկաւ, ձիաւորի շորերը հանեց,  
ձիու վրայ գցեց, բռնեց նրան, տարաւ, մի ծա-  
ծուկ տեղ կապեց ու տուն գնաց:

Միւս օրը միջնակ եղբօրն ասաց. «գնա՞ Հիմի  
էլ քո հերթն է: Նա ասաց. «բան չունիմ, ես իմ  
աներենց տունն եմ գնում»: Ասաց ու դուրս եկաւ,  
գնաց: Այս անգամ փոքր եղբայրն երկու նետ վեր-  
ցրեց, գնաց ու փոսի մէջ թագ կացաւ: Քիչ մնաց,  
տեսաւ, մի կարմիր մարդ է գալիս՝ կարմիր ձիու  
վրայ նստած, շորերն ու զէնքերը ողջ կարմիր: Սա  
թագաւորի գերեզմանին մօտեցաւ, ասաց. «Անի-  
ծուես, թագաւոր, իմ եղբօրը դու սպանեցիր»: Եւ  
նիզակը քաշեց, գերեզմանի տակովը տուաւ, որ  
շուռ տայ. տղան փոսից նետն արձակեց ու թագ

կացաւ: Կարմիր ձիաւորը դէս ու դէն ընկաւ,—  
այս ով էր, այս ով էր, ոչինչ չգտաւ: Յետոյ նո-  
րից նիզակը քաշեց, գերեզմանի տակովը տուաւ:  
Տղան երկրորդ նետն արձակեց: Մարդն այս անգամ  
ձիուց վայր ընկաւ, տեղն ու տեղը մեռաւ: Թագաւո-  
րի որդին փոսից դուրս եկաւ, ձիաւորի շորերը հա-  
նեց, ձիու վրայ կապեց, բերաւ, առաջուայ ձիու  
կշտին կապեց ու ինքը տուն գնաց:



Եկաւ, հասաւ երրորդ գիշերը: Փոքր տղի  
հերթն է: Սա չորս նետ և մի գուրզ վեր առաւ,  
գնաց, փոսի մէջ թագ կացաւ: Տեսաւ՝ մի սև ձիա-  
ւոր է գալիս: Ձիաւորը գերեզմանին մօտեցաւ, ա-  
սաց. «Անիծուես, թագաւոր, երկու եղբօրս դու  
սպանեցիր»: Ասաց, նիզակը քաշեց, որ գերեզմանի  
քարը գլորի: Իսկոյն տղան նետը արձակեց: Նետը  
դիպաւ ձիաւորին, բայց չազդեց: Երկրորդը, եր-  
րորդը, չորրորդն արձակեց, ոչինչ չեղաւ: Ձիաւո-  
րը մօտեցաւ, որ թագաւորի որդուն սպանի: Սա  
գուրզն առաւ, այնպէս արձակեց ձիաւորի վրայ,  
որ նա ձիուցը վայր ընկաւ, շունը փշեց: Տղան  
դուրս եկաւ, նրա շորերն էլ հանեց, ձիու վրայ  
կապեց, տարաւ, մի գոմ բռնեց և առաջուայ ձիե-

ըի հետ այդտեղ կապէց: Ինքը տուն եկաւ, եղալոներին ոչինչ չասաց:

Տարիներ անցան: Եղբայրները լսեցին, որ մէկ թագաւոր իւր աղջկանը եօթը սարի յետևում է դրել ու ասել. «Ով որ այդ եօթը սարի գլխովը ձիով կժռաչի, աղջիկս կառնի, իմ փեսան կդառնայ: Մեծ ու միջնակ եղբայրները մի ջորի վարձեցին, որ իրանք էլ գնան, տեսնեն՝ ով է այն քաջը: Փոքը տղան ասաց. «Եղբայրներ, ինձ էլ տարէք»: Նրանք բարկացան, ասացին. «Քեզ ուր ենք տանում, անշնորհք. ուզում ես ոտնատակ տան, սպանեն. տեղդ ծանր նստիր»: Փոքը եղբայրը սուս կացաւ, տեղը նստեց: Եղբայրները կաղ ջորին հեծան, քշեցին, գնացին:

Հենց որ նրանք քաղաքի դռնից դուրս եկան, փոքը տղան գնաց, սպիտակ ձին դուրս քաշեց, շորերը հագաւ, զէնք ու զրահը դցեց, գնաց: Տեսաւ՝ եօթը սարի մօտ շատ մարդիկ են կանգնել. այնտեղ էին և իւր եղբայրները: Սպիտակ ձիւուրը մտրակով աջ ու ձախ խփեց, ճանապարհ բաց արաւ, ուզում էր եղբայրներին էլ խփել, նրանք վայ, վայ արին, չփփեց: Յետոյ ձիուն մի լաւ մըտրակեց, եօթը սարի գլխովն անց կացաւ, աղջկանը հասաւ, բռնեց նրան, կաւակին դրաւ ու մէկ էլ ձիուն հասցրեց, եօթը սարի գլխով թռաւ, մարդկանց բազմութիւնը ճղեց, անց կացաւ, տուն վերադարձաւ,

Բաւական ժամանակ անցաւ, եղբայրները եկան: Փոքը խեց խեղճ հարցրեց. «Ի՞նչ կար, ի՞նչ չկար»: Նրանք պատասխանեցին. «Ի՞նչ պիտի լինէր. կանգնած էինք. յանկարծ մի սպիտակ ձիւոր եկաւ՝ սպիտակ շորերով, սպիտակ գէնքերով: Եօթը սարի գլխովն անց կացաւ, աղջկանը վեր առաւ ու գնաց, էլ չիմացանք՝ թէ ուր:

— Լաւ է, որ ես այնտեղ չեմ եղել, ասաց փոքը եղբայրը:

Մի քանի տարուց յետոյ եղբայրները լսեցին, որ թագաւորն ութ սարի յետևում մի աղջիկ է դրել. ով որ ութ սարի գլխով թռչի, աղջիկը նըրանն է:

Մեծ եղբայրներն էլի մի կաղ ջորի բռնեցին, գնացին: Փոքը չտարին: Ասացին. — դու այստեղ կաց: Փոքը վեր կացաւ, կարմիր ձին հեծաւ, կարմիր շորերն ու զէնքերը հագաւ, գնաց, ութ սարի գլխով անցաւ, աղջկանը վեր առաւ, կաւակին դրաւ ու էլ յետ տուն վերադարձաւ: Բաւական ժամանակից յետոյ եղբայրները եկան: Հարցրեց. «Ի՞նչ կար, ի՞նչ չկար»: — Ի՞նչ պիտի լինէր, ասացին: Մի կարմիր ձիաւոր եկաւ՝ կարմիր շորերով ու զէնքերով, ութ սարի գլխով անցաւ, աղջկանը վեր առաւ, տարաւ. էլ չգիտենք, թէ ուր տարաւ: Նա ասաց. «Լաւ է, որ ես չէի եկել»:

Մի քանի տարուց յետոյ էլի լսեցին, որ մի թագւոր ինն սարի յետևում մի աղջկկ է դրել ու ասել. «Ով որ ինն սարի գլխով ձիով թռչելով կանցնի, աղջիկս նրան կտամ»:

Մեծ եղբայրները կաղ ջորին հեծան, գնացին, փոքրին չտարին: Սա էլ վեր կացաւ, սև ձին հեծաւ, սև զէնքերը կապեց, գնաց: Ինն սարի մօտ մեծ բազմութիւն էր հաւաքուած: Մտրակով աջ ու ձախ խփեց, մի քանիսին սպանեց, ճանապարհ բաց արաւ. երբ եղբայրներին հասաւ, մտրակը բարձրացրեց, որ նրանց էլ խփի, նրանք վայ-վայ արին, էլ չխփեց: Յետոյ ինն սարի գլխով թռաւ, անցաւ, աղջկանը վեր առաւ, յետ դարձաւ:

Եղբայրները եկան. փոքրը հարցրեց. — այժմ ինչ կար: Նրանք պատասխանեցին. «Ի՞նչ պիտի լինէր: Մի սև ձիաւոր եկաւ, մի քանի մարդ սպանեց, ուզում էր մեզ էլ խփի, վայ-վայ արինք, չը-խփեց: Յետոյ ինն սարի գլխով անց կացաւ, աղջկանը կաւակին դրաւ, տարաւ: Էլ չիմացանք, թէ ուր տարաւ»:

—

Մի քանի ժամանակ անց կացաւ. փոքր եղբայրը մեծերին ասաց. «Յիշում էք, որ մեր հօր պատուէրը չկատարեցիք, չգնացիք նրա գերեզմանը պահպանելու: Դուք ձեր պարտքը չկատարեցիք, բայց ես ձերն էլ կատարեցի, իմն էլ. երեք գիշերն էլ ես գնացի: Աստուած սիրեց, բանս յաջողեց: Երեք ձի ընկաւ ինձ՝ մէկը սպիտակ, մէկը

կարմիր, մէկը սև»: Եւ եղբայրներին տարաւ, ձիերը ցոյց տուաւ, ասաց. «Ես էի, որ այդ ձիերով սարերի գլխով թռայ և աղջիկներին բերի»: Եղբայրները աղաչանք արին, ասացին. «Եղբայր, մենք մեղաւոր ենք, ներիք: Բայց երեք ձին դու ինչ ես անում, մեզ էլ բաժին տուր»: Վեր կացաւ, սպիտակ ձին մեծ եղբօրը տուաւ, կարմիրը միջնակին, սևն ինքը վեր առաւ: Յետոյ առաջին աղջիկը մեծ եղբօրը տուաւ, երկրորդը՝ միջնակին, իսկ երրորդն ինքը վեր առաւ: Ուրախացան ամենքը, եօթն օր, եօթը գիշեր հարսանիք արին:

### Շունն ու կատուն.

Ժամանակով կատուն ճօն էր,  
Շունն էլ գլխին գլխարկ չունէր.  
Շատ շատերի գիմեց, խնդրեց  
Եւ մի գառնի մորթի ճանկեց:  
Չմեռը մի օր սա վեր կացաւ,  
Մորթին կատուի կուշտը տարաւ.  
«Բարի աջողում, ուստա՛ Փիսո,  
«Գլուխս մրսեց, ի սէր Աստծոյ  
Ա՛ռ ալս մորթին և ինձ համար  
Գլխարկ կարիր գլխիս յարմար:  
Վարձդ կտամ, միամիտ մնա,  
Միայն, խնդրեմ, շատ չուշանալ»:  
— Աչքիս վրայ, քեռի Քուշի,  
Մի գլխարկ է, հու մուշտակ չի.  
Քո թանգարին խաթրի համար

Ուրբաթ օրը համեցէք տար.  
Փողի մասին աւելորդ է.  
Մեր մէջ խօսելն էլ ամօթ է.  
Ի՞նչ մեծ բան է, տօ, հէր օրհնած,  
Հա, հա, հա... գլխարկի վարձ...

\* \*

Ուրբաթ օրը լուսաբացին  
Գլուխը բաց քեռի Քուշին  
Ուրախ ուրախ ծանր ու մեծ  
Ուստա կատուի շէմքին կանգնեց:  
Կատուն եկաւ քուրքը հագին.  
Շունը տեսաւ, բեխի տակին  
Իրան իրան քիչ փընթփընթաց  
Ու մուշտարու վրայ գոռաց.  
«Ճրտից մեռար, վահ, տնաշէն,  
Զես թողնում, որ մի շունչ քաշեմ.  
Հաց-պանիր չէ հո, դեռ նոր եմ  
Զուր սրսկել, որ կարեմ:  
— Դէ, հէր օրհնած, ալզպէս ասիր,  
Էլ բարկանալդ ինչիս է.  
Փող եմ տալիս, շուտով կարիր,  
Թէ չէ, ասա էգուց արի:  
Ասաւ Քուշին ու նեղացած  
Վերադարձաւ գլուխը բաց:

\* \*

Մէկ էլ եկաւ, դարձեալ չկար.  
Այս անգամը գիպան իրար,  
Էլ գող Փիսօ, էլ քաշալ Շուն...

Բանը հասաւ գիւանբաշուն:  
Մինչև շունը գնաց եկաւ,  
Ուստա կատուն կոտր ընկաւ.  
Գլուխն առաւ ու մի գիշեր  
Փախաւ, կորաւ, այն գնալն էր...

—

Այն օրուանից մինչև օրս էլ  
Շունն այս բանը չի մոռացել.  
Նա մտքումը դեռ պահում է.  
Կատուին որտեղ պատահում է,  
Վրայ է վազում, մորթուց քաշում,  
Իրա մորթին է յետ ուզում:  
Իսկ սեերես կատուն յանկարծ  
Յետ է գառնում ու բարկացած  
Փշացնում է. այսինքն՝ նոր եմ  
Զուր սրսկել, պիտի կարեմ:



### Անողորմ պառաւը.

Եղել է, չի եղել մի պառաւ կնիկ, ինքն էլ  
շատ աղքատ: Մէկը չկար, որ նրան պահպանէր.  
մի մարդ չկար, որ նրան մի կտոր հաց տար:

Միայն մի պարտէղ ունէր, որտեղ մի չոր տանձի ծառ կար:

Մի օր պառաւը կտուրը բարձրացաւ, նստեց, շատ լաց եղաւ, Աստծուն աղաչեց, ասաց. «Տէր Աստուած, խեղճ եմ, ինձ մի ապրուստ տուր, որ նրանով կառավարուեմ»: Լաց եղաւ, այնքան լաց եղաւ, որ քունը տարաւ, կտրին քնեց: Երազում Աստուած երեաց, ասաց.

—Վեր կաց, գնա. պարտէզդ միշտ վարիր, չոր ծառն էլ ամեն օր ջրիր:


Պառաւը վեր կացաւ, ուրախացած տուն եկաւ: Ամեն օր ծառը ջրում էր. գարունքին միշտ պարտէզը վարում էր: Ծառն այնքան տանձ էր վեր առնում, որ ճղակոտոր էր դառնում. պարտէզում ամեն ինչ լաւ բսնում էր: Պառաւն էլ ուրախ ուրախ քաղում էր, ծախում: Այսպէս շարունակուեց մի քանի տարի: Պառաւը շատ փող աշխատեց, լաւ տուն շինեց: Ոչ մի բանի պակասութիւն չէր քաշում, ապրում էր առօք-փառօք:

Մի օր պառաւը իւր տան պատշգամբի վրայ հպարտ հպարտ ման էր գալիս: Տեսաւ մի աղքատ կնիկ է եկել, ողորմութիւն է ուզում: Բարկացաւ վրան, հայհոյեց. «կորիր, անամօթ. դու աղքատ չես»: Ասաց ու ծառաներին հրամայեց, որ նրան թակեն, դուրս անեն:

Մինեց. պառաւը իւր ննջարանը մտաւ, փափուկ տեղաշորերի մէջ պառկեց, քնեց: Առաւօտը վեր կացաւ, տեսաւ, որ ինքն էլի իւր կտրաւոր քանդուած տանը նստած, բոլոր հարստութիւն ու

գանձ կորած, տանձի ծառը չորացած, պարտէզն էլ առաջուայ պարտէզը: Մտարերեց իւր արածը, շատ փոշմանեց: Մեղայ է գալիս, կտուրը բարձրանում, լաց լինում, լաց լինում, մինչև քունը տանում է: Երազում տեսնում է Աստծուն: Աստուած ասում է.

«Ես քեզ այնքան գանձ ու հարստութիւն տուի, որ դու էլ ուբեշն տաս: Բայց դու այն խեղճ պառաւ կնոջը մի կտոր հաց էլ չտուիր. դեռ հայհոյեցիր, անպատուեցիր և ծեծելով դուրս արիր: Ես էլ քո հարստութիւնը խլեցի, այն խեղճ կնոջը տուի»:



1  
Meditatio. Cogitatio. quibus deinceps omnia  
etiam et ipsi pugnare illi qui duximus transversum  
cives. quoniam. quod si pugnare possimus non  
poterit. sed si non possimus non est poterit  
nullus transversus et huiusmodi. hanc est ueritas  
quoniam. quod si pugnare possimus non est poterit  
nullus transversus et huiusmodi. hanc est ueritas

Հեղինակի միւս աշխատութիւնները.

- |                                    |      |
|------------------------------------|------|
| 1) Հայոց բանահիւսութեան տեսութիւնը | — 60 |
| 2. Վեհափառ Հայոթկը . . . . .       | — 10 |

Տպագրութեան համար պատրաստ են.

- 1) Հայոց լեզու՝ երկորդ տարի
- 2) Հայոց լեզու երրորդ տարի.
- 3) Հատընտեղի Պ-րդ և Ե-րդ տարի.

Գիւտ քահ. Աղանեանցի մօտ է ամքողջ պահեստը հետեւեալ գովերի.

1. Խուլ Խաչիկ, պատմական վէպիկ Քամալեանց Ս. 1894 . . . . — 25
2. Ֆերիզադէի Երգը. Փոքը Ասիայի կեանքից, թարգմ. Յ. Լալալեանց 1894 . . . — 25
3. Ղարիբ Մշեցի, պատկեր տաճկահայերի ներկայ կեանքից 1894 . . . . — 10
4. Հուքուլէլ. Տարերք բնական գիտութեանց. թարգմ. Իս. Յալութիւնեանց 1894 — 40

ԳԻՆՆ Է 30 ԿՈՊԵԿ.

2013

3936

«Ազգային գրադարան»



NL0061162

1 P